

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՐԱՌՊԴԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Ռ. Ն. ՇԱԼՈՒՆՑ

ՀԱՄԱՆՈՒՆ ՐԱՌԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ*

ԱՌԱՋԱՐԱՆ

Համանուն բառերը հայերենի բառային համակարգի կարևոր և բաղկացուցիչ մասն են, սակայն առ այսօր, բացի առանձին հոդվածներից, դպրոցական դասագրքերում և բուհական ձեռնարկներում տրված համառոտ տեղեկություններից դրանց վերաբերյալ չունենք մենագրական ուսումնասիրություն:

Համանուն բառերի հետազոտությունը խիստ անհրաժեշտ է ոչ միայն բառադիտության, այլև իմաստաբանության, դարձվածաբանության, ոճաբանության, ընդհանուր լեզվաբանության մի շարք հարցերի լուսաբանման տեսակետից:

Աշխատանքը դրելիս մեր առջև դրել ենք հետևյալ հիմնական նպատակները. 1) բառական համանունության և դրա հետ կապված այլ հարցերի (համանունության և բազմիմաստության սահմանազատման) քննությունը կատարելիս վեր հանել և դնահատել այն դրականը, որ արվել է բառագիտության մեջ ընդհանրապես, 2) դասակարգել ժամանակակից դրական հայերենի համանուն բառերը, որոշել նրանց տարբեր տիպերը և տարածման աստիճանը, 3) որոշել համանուն բառերի տեղը բառապաշարի համակարգում, 4) ուսումնասիրել համանուն բառերի գործառությունը տարբեր կոնտեքստներում, 5) համանուն բառերի բառական համակարգը ներկայացնել իր ամբողջության մեջ և հնարավորին չափ պահպանել հարցերի քննության համալսականությունը:

Ուսումնասիրության ընթացքում հենվել ենք գրական հայերեն-

* Խմբագիր՝ Հ. Ա. Օհանյան:

նի ընձեռած փաստերի և տվյալների վրա՝ համապատասխան օրինակներ բերելով գեղարվեստական և գիտական գրականությունից, ինչպես նաև մամուլից:

Հայտնի է, որ ժամանակակից հայերենը հանգես է գալիս երկու գրական տարբերակներով՝ արևելահայերենով և արևմտահայերենով: Չնայած դրան, մենք հակված չենք կարծելու, թե հայությունն ունի երկու լեզու, երկու բառային համակարգ: Քանի որ երկու տարբերակների համար էլ բառապաշարը գրեթե ընդհանուր է, և հայության երկու հատվածների համար էլ այն հավասարապես հասկանալի է, ուստի ուսումնասիրության ընթացքում գրական հայերենի ամբողջ բառապաշարը դիտել ենք որպես ընդհանուր համակարգ:

Որոշ լեզվաբաններ համանուն բառերի ուսումնասիրությունը կատարելիս քննությունից դուրս են թողնում թերիմաստ բառերը: Նրանք պատճառաբանում են, որ այնքանով, որքանով համանուն բառերի մեջ մտնում են միայն իմաստով տարբեր բառերը, հետևապես առաջնային պլանում է բառի իմաստը, որից իբր բոլորովին զուրկ են թերիմաստ բառերը: Քանի որ այդ լեզվաբանները թերիմաստ բառերը «բառ» չեն համարում, ուստի՝ բավարարվում են միայն լիիմաստ բառերի քննությամբ: Այս տեսակետը, սակայն, ճիշտ չէ: Այստեղ մենք մանրամասն չենք անդրադառնում լիիմաստ և թերիմաստ բառերի քննությանը¹, թեև իհարկե, ակնհայտ է, որ թերիմաստ բառերը որակապես տարբերվում են լիիմաստ բառերից: Եվ ընդհանրապես լեզվի բառային կազմում բոլոր բառերը նույն դերն ու նշանակությունը չունեն, սկսած նյութական իմաստ ունեցող բառերից՝ վերջացրած բառային իմաստը որոշ չափով կորցրած այն հնչյունական միացություններով, որոնց բառ լինելը հաճախ կասկածանք է հարուցում: Այնուամենայնիվ, թերիմաստ բառերից յուրաքանչյուրն ունի իր որոշակի իմաստը, որով այն տարբերվում է նույն հնչյունակազմն ունեցող այլ բառերից: Համանուն բառերի ուսումնասիրության ժամանակ հիմք ենք ընդունել այն սկզբունքը, որ համանունական խմբի կազմում կարող է լինել յուրաքանչյուր բառ՝ անկախ նրանից, թե որ խոսքի մասին է ադատվում այն: Համանուն բառերի ուսումնասիրությունը թերիկլիսի, եթե սահմանափակվենք լոկ լիիմաստ բառերի քննությամբ:

¹ Այդ մասին տե՛ս Ս. Արամեանյան, *Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխաբերությունը ժամանակակից հայերենում*, Երևան, 1965, էջ 89—194:

Ուսումնասիրության ընթացքում մեր կիրառած մեթոդը հիմնականում համաժամանակյա քննությունն է: Որոշ դեպքերում հարկ է եղել կիրառել ինքնադիտման մեթոդը, օրինակ՝ համանուն բառերի գործառնությունը տարբեր կոնտեքստերում կամ բառային տարբեր շրջապատներում ուսումնասիրելիս մենք օգտվել ենք այդ մեթոդից:

ԲԱՌԱԿԱՆ ՀԱՄԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ ԸՄԲՈՆՈՒՄԸ ԼԵՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ժամանակակից բառագիտության ամենահիմնական և դեռևս չվճռված հարցերից մեկը բառի և նրա սահմանների որոշման հարցն է, որի հետ սերտորեն կապվում է նաև բառական համանունների խնդիրը: Եվ պատահական չէ, որ վերջին ժամանակներս համանուն բառերի ուսումնասիրությունը ավելի հաճախ է զբաղվում լեզվաբանների ուշադրությունը: Համանուն բառերի ուսումնասիրությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն բառարանագրության, այլ նաև լեզվի ընդհանուր տեսության որոշ հարցերի լուսաբանման տեսակետից: Լեզվի համակարգային բնույթը բացահայտելիս հաճախ անհրաժեշտ է լինում լեզվական միավորների համակարգային կապերը քննել բառային մակարդակում: Այդ կապերը, սակայն, բավարարչափոփ չեն ուսումնասիրվել: Այս հանգամանքը մեծ դժվարություն է ստեղծում համանուն բառերի ուսումնասիրության համար:

Այժմ համանուն բառերի ծագումը, զարգացումը, գործառնությունը ուսումնասիրության առարկա են դարձել ամենատարբեր լեզվաբանական ուղղությունների կողմից. «Մեր հարյուրամյակում» լեզվաբանության ոչ մի բնագավառ չի ունեցել այնպիսի առաջնություն հաջողություններ, ինչպես համանունների ուսումնասիրությունը: Այդ պրոբլեմին նվիրված գրականությունն այնքան առատ է, այնքան անսպասելի են ստացված արդյունքները, այնքան յուրահատուկ են կիրառվող մեթոդները, որ այդ պրոբլեմների վճռման համար լեզվաբանության մեջ առաջացել է մի հատուկ ենթաճյուղ, որը կարելի է անվանել համանունաբանություն²:

² S. Ullman. The Principles of semantics, Glasgow, 1951, page 125.

Չնայած համանունների ուսումնասիրության բնագավառում այդքան շատ բան է արվել, այնուամենայնիվ, մինչև այժմ դրանց որոշումն ու սահմանումը շարունակում է մնալ վեճերի ու տարակարծությունների առարկա: Դեռևս չկա համընդհանուր կարծիք համանունների էության, նրանց սահմանման վերաբերյալ: Կան համանուն բառերի տարբեր սահմանումներ, որոնք կարելի է խմբավորել հետևյալ կերպ. այսպես՝ գրային սահմանումների համար բնորոշ են համարվում դրության նույնությունը³, ճնշումային սահմանումները հենվում են արտասանական նույնության վրա⁴, իսկ ճնշումա-գրային սահմանումների հիմքում ընկած է համանուն բառերի արտասանությունը և գրության նույնությունը⁵:

Պետք է նշել, որ համանուն բառերի հարցում գրային կողմը հիմք ընդունելը մեզ կտանի սխալ ուղիով: Չնայած գրավոր խոսքի հույժ կարևորությանը, հասարակության հաղորդակցության հիմնական միջոցը մնում է բանավոր խոսքը: Գրավոր խոսքը գործնականում բանավոր խոսքի գրաֆիկական արտապատկերումն է: Գուցե գրության նույնության հաշվի առնելը նպատակահարմար չլինի ուսուցողական տեսակետից և այդպես մատուցվի դպրոցական դասագրքերում, բայց համանունների գիտական դասակարգման ժամանակ դա կարող է հանգեցնել սխալների:

Մեր կարծիքով, վերոբերյալ սահմանումներից ավելի ճիշտ են «ճնշումային» սահմանումները, այնքանով, որքանով համանուն բառերի համար բնորոշ է համարվում արտասանության նույնությունը: Սակայն այս սահմանումներին (ինչպես նաև և՛ ավանդական, և՛ ժամանակակից տերմիններով ձևակերպվող սահմանումներին՝ «ձև և բովանդակություն», «արտահայտության պլան և բովանդակության պլան») բնորոշ է մի թերություն. հաճախ է խոսվում իմաստների (բովանդակության պլանի) տարբերության մասին, առանց վրդակրեմ կերպով զանազանելու բառական և քերականական իմաստները:

³ An Etymological Dictionary of the English language, by Walter Skeat, Oxford, 1909.

⁴ О. С. Ахманова, Очерки по общей и русской лексикологии, М., 1957, стр. 107; Р. А. Будагов, Введение в науку о языке, М., 1958, стр. 39; Л. А. Булаховский, Лексикология современного русского языка, М., 1964, стр. 41.

⁵ Н. М. Шанский, Лексикология современного русского языка, М., 1964, стр. 41.

Որոշ լեզվաբաններ համանունները սահմանում են ըստ Սոսյուրի տերմինների: Օրինակ՝ Շ. Բալին տալիս է համանունների սահմանումը առանց օգտագործելու «բառ» տերմինը. «Համանուն են կոչվում երկու նշաններ, որոնք ունեն նույնական նշանակից և տարբեր նշանակելիք»⁶: Նման սահմանումը, սակայն հստակորեն չի սահմանազատում համահունչ միավորների տարբեր տիպերը, համանուն և բազմիմաստ բառերի սահմանները: Այս սահմանման համաձայն համանուն բառեր են համարվում նաև կոնտեքստային և շարահյուսական համանունները:

Շատ լեզվաբաններ ու մասնավորապես բառարանագիրներ համանուն են համարում միայն տարբեր ծագում ունեցող բառերը, ուստի իմաստային վերաբերման հետևանքով առաջացած համահունչ բառերը դուրս են մնում համանունությունից⁷: Այդ ըմբռնումը, սակայն, ճիշտ չէ և չի կարող լեզվի ներկա վիճակի համանունների վերաբերյալ գոհացուցիչ լինել, քանի որ բացի տարարմատ (гетерогенных) համանուններից, կան նաև երբեմնի բազմիմաստ բառի տարբեր իմաստների միջև եղած իմաստային կապերի խզման հետևանքով առաջացած համարմատ (гомогенные) համանուններ:

Համանուն բառերի որոշումը, սահմանազատումը պետք է կատարել լեզվի համաժամանակյա քննությամբ: Շատ դեպքերում համանունական խմբերը պատմականորեն նույն բառն են (կանգուն₁—կանգնած, անխախտ, կանգուն₂—երկարության չափ, կարմրուկ₁—հիվանդության անուն, կարմրուկ₂—կարմրագույն, զատիկ₁—քրիստոնեական տոն, զատիկ₂—միջատ), բայց լեզվի ներկա վիճակում դրանք իմաստային կողմով չեն կապվում իրար հետ: Հնարավոր է նաև հակառակ երևույթը. երբեմնի համանուն բառերը միանում են մեկ բառի կազմում՝ անկախ նրանց պատմական ծագումից: Իհարկե, նման համանուն բառերի իմաստային կապերը բացահայտելու համար պետք է կատարել պատմական քննություն:

Այժմ մեծ մասամբ բառական «համանունություն» ասելով հասկանում են. 1) երկու և ավելի բառերի արտասանության պատահական զուգադիպություն, 2) երբեմնի բազմիմաստ բառի տրոհումից առաջացող տարբեր բառեր: Թեև այս համանունու-

⁶ Մ. Բալլի, *Общая лингвистика и вопросы французского языка*, М., 1955, стр. 189.

⁷ *Лексикографический сборник*, вып. IV, 1960, стр. 40.

թյունները իրենց ծագմամբ միանգամայն տարբեր են, բայց յուրաքանչյուր լեզվում դրանք նույն երևույթն են ներկայացնում:

«Համանուն» հասկացությունը բխում է երկու և ավելի միավորների հնչական հարաբերություններից: Հենց այս հնչական հարաբերությունների հետևանքով է, որ այդ բառերը կապվում են իրար հետ, այսպես՝ կոչված, համանունական խմբերով: Համանունների միջև արտահայտության պլանում գոյություն ունի նույնության հարաբերություն, իսկ բովանդակության պլանում համանունական խումբը, որպես կանոն, բնորոշվում է այդ բառերի միջև եղած իմաստային կապերի բացակայությամբ:

Հաշվի առնելով վերը նշված բոլոր դիտողությունները, համանուն բառերի համար կարելի է տալ հետևյալ սահմանումը: Համանուն են կոչվում երկու և ավելի բառեր և բառածևեր, որոնք արտասանությամբ նույն են, բայց նկատարվում են բառական կամ բառաբանական իմաստներով⁸:

Քեկ արտասահմանյան լեզվաբանական գրականության մեջ շատ նյութ կա համանունների վերաբերյալ, սակայն բացակայում է դասակարգման համոզիչ սկզբունքը: Համանունների շատ բառարաններ բառերը մատուցում են անսխտեմ, նույնիսկ շտաբերելով լրիվ և մասնակի համանուններ⁹: Համանունների դասակարգման հաջող փորձ են արել սովետական լեզվաբաններ պրոֆ. Ա. Ի. Սմիռնիցկին և ակադեմիկոս Վ. Վ. Վինոգրադովը¹⁰:

Համանուն բառերը բառապաշարի համակարգում կազմում են համանունական խմբեր, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է երկու, երեք և ավելի բառերից: Յուրաքանչյուր համանունական խումբ իր հերթին կազմում է բառական ենթահամակարգ: Կառուցվածքային տեսակետից յուրաքանչյուր լեզվի՝ իրար նկատմամբ համանուն միավորների կազմը միատեսակ չէ: Մի դեպքում կարող են համընկնել բառեր, որոնք համանուն են քերականական բոլոր ձևերում, ինչպես՝ ափ-բուռ, ափք-եղերք, դռը-սարսուռ, դռը-օղակապ, անվադող, վառելի-հերկել, վառելք-քշել, առաջ շարժ-

⁸ Համանուն բառերի համար ավելի բնորոշ է գրության, քան արտասանական նույնությունը, ուստի համաձայն չենք հեղինակի սահմանումին (խմբագիր):

⁹ W. Skeat. Etymological Dictionary of the English language, Oxford, 1909. H. Ogata, R. Inglott, Dictionary of English Homonyms. Pronouncing and Explonatory, Tokyo, 1943.

¹⁰ А. И. Смирницкий, Лексикология английского языка, М., 1956; В. В. Виноградов, Об омонимии и смежных явлениях, ВЯ, 1960, № 5.

վել, ֆերթել—մաշկը հանել, ֆերթել—բանաստեղծել և այլն, մի
այլ դեպքում կարող են համընկնել քերականական տարբերարժեք
ունեցող բառերը, ինչպես՝ հանդերձ₁—հադուատ, հանդերձ₂—միա-
սին, գա₁—թոթ, գա₂—գալ բայի ըղձական ապառնիի բայաձևը,
տուր₁—ծեծ, տուր₂—տալ բայի հրամայականի բայաձևը, հաբեմ₁-
կանանոց, հաբեմ₂—հաբել (հնձել) բայի ըղձական ապառնիի բա-
յաձևը և այլն: Համանուն բառերի ահա այս հատկանիշներն են
հաշվի առնվում Սմիռնիցկու և Վինոգրադովի դասակարգումնե-
րի ժամանակ:

Սմիռնիցկին անգլերեն լեզվի համանունների նյութի վրա ա-
ռանձնացնում է համանունության տարբեր տեսակները և հիմնա-
վորում դրանց տարբերություններն ու նմանությունները: Նա առա-
ջին հերթին սահմանազատում է լրիվ և մասնակի, այնուհետև՝ բա-
ռական և բառաքերականական համանունությունը, դրանց դասա-
կարգման հիմքում դնելով բառական և քերականական իմաստների
տարբերությունը: Սմիռնիցկին բառական համանուններ է համա-
րում այն զույգերը, որոնք համընկնում են քերականական բոլոր-
ձեքում, ինչպես անգլերեն mass₁—մասսա, mass₂—պատարադ:
Ծրկու բառերն էլ գոյական են և սեռական հոլովում ունեն նույն ձևը:
Ծրկորոգ տիպը բառաքերականական համանուններն են, որոնք
համանունություն են կազմում ոչ բոլոր ձևերում՝ found-հիմնել,
found՝ find բայի անցյալ ժամանակը:

Վինոգրադովը ընդհանրապես համանուն է համարում միայն
այն բառական միավորները, որոնք արտաքին հնչյունական կազ-
մով համընկնում են իրենց բոլոր ձևերում, այն, ինչ Սմիռնիցկին
անվանում է լրիվ (полный) բառական համանուններ, այսինքն՝
երբ համանուն են ոչ թե առանձին բառերի պատահական ձևերը,
այլ նրանց ձևերի ողջ համակարգը, ընդ որում, համանունությունը
դիտվում է հենց քերականական նույնական ձևերում: Դրա հետ
մեկտեղ, Վինոգրադովը ընդունում է նաև անցումային և խառը
ձևեր, որն անվանում է «մասնակի համանունություն»: Այդ այն
դեպքն է, երբ զուգադիպում են ոչ թե առանձին ձևեր, այլ դրանց
ձևերի նշանակալից մասը:

Թեև և՛ Սմիռնիցկին, և՛ Վինոգրադովը հստակ կերպով սահ-
մանազատում են լրիվ և մասնակի համանունության դեպքերը,
սակայն երկու հեղինակներն էլ միևնույն երևույթը դիտում են տար-
բեր կերպ. օրինակ՝ անգլերենում lait (լույս և թեթև), found (հիմ-
նել և գտնել) բառերը առանձին ձևերում զուգադիպում են, որը Վի-

նոգրագործը անվանում է համաձևություն (омоформия)¹¹, իսկ Սմիռնիցկին՝ բառաքերականական համանունություն:

Այս ամբողջ շարագրանքից կարելի է եզրակացնել, որ ամենից բնորոշը և հավաստին համանուն բառերի ստորաբաժանումն է ըստ երկու հատկանիշի.

1. երբ հաշվի է առնվում զուգահեռաբանող միավորների քանակային հատկանիշը (լրիվ և մասնակի համանուններ),

2. երբ հաշվի է առնվում զուգահեռաբանող միավորների բառական և քերականական հատկանիշը (բառական և բառաքերականական համանուններ):

Լեզվաբանական դրականության մեջ համանուն բառերի շարքում ընդունված է տարբերել.

1. Համադիր բառեր (омографы). այդպես են անվանվում դրություններ նույն, բայց արտասանությամբ տարբեր բառերը (հունարեն *homos*՝ նման, և *grapo*-գիր): Ինչպես՝ *замок-ամրոց*, *замок-կողպեք*, *мукá-ալյուր*, *мýка-տանջանք*:

2. Համահունչ բառեր (омофоны). այդպես են կոչվում այն բառերը, որոնք ունեն նույն արտասանությունը, բայց դրությամբ տարբեր են (հունարեն՝ *homos*-նման, միանման, *phone*-հնչյուն), ինչպես հայերեն՝ *անօդ-անոթ*, *աղա-ախտ*, *որդ-որթ*: Ոմանք համահունչ են համարում այն բառերը, որոնք տարբեր ձևահնչությաբանական կազմություններում արտասանությամբ համընկնում են, ինչպես ռուսերենում *лук-луг*, *паз-пасс*: Ոմանք էլ համահունչ են անվանում նաև իմաստով տարբեր այն բառական միավորները (*пруд* և *прут*), որոնք միատեսակ են հնչվում ուղղական և հայցական հոլովներում, բայց ունեն հնչությային տարբեր կազմություններ, որոնք հանդես են դալիս այդ բառերի այլ ձևերում, այլև ածանցավոր կազմություններում, ինչպես՝ *прута-пруда*, *прутик-прудик*¹².

Համադրությունները չի կարելի դասել համանունների թվին, քանի որ այդ բառերը արտասանությամբ չեն համընկնում, համընկնում են միայն դրությամբ: Ինչպես արդեն նշել ենք սահմանումների մասին խոսելիս, թեև դրությունը արտասանությունից

¹¹ Վ. Վ. Վինոգրադով, *նշվ. աշխ.*, էջ 13:

¹² Տե՛ս օրինակ՝ *А. А. Реформатский, Введение в языковедение, М., 1967, էջ 84*:

հետո բառի երկրորդ կողմն է, բայց, այնուամենայնիվ երկրորդական է, ունի պատմական բնույթ և համանունների բնորոշման համար հիմք հանդիսանալ չի կարող:

Քանի որ համանունության պրոբլեմը հենվում է լոկ համահնչունության վրա, ուստի համահնչ բառերը պետք է դասվեն համանունների շարքին:

Բացի համահնչ բառերից և համադրությաններից ոմանք տարբերում են նաև հարանունները (паронимы), հունարեն՝ παρα-մոտ, ονυμα-անուն: Դրանք արտասանությամբ մոտ են, բայց դրությամբ և իմաստով տարբեր, ինչպես, լուսթյուն-լուսթյուն, ապրել-ապրիլ, 2α.μα-2α.μα, 6α.η.κα-6α.η.κα¹³: Պետք է կարծել, որ այս բառերը ոչնչով չեն հիշեցնում համանուններին, քանի որ բոլոր հատկանիշներով տարբերվում են նրանցից:

Ինչպես տեսնում ենք, տարբեր հետազոտողներ տարբեր սկզբունքներով են մոտենում բառական համանուններին: Ամենատարբեր աշխատանքների քննությունը մեզ բերում է այն համոզման, որ տարբեր հեղինակներ նման կազմ և հարաբերություն ունեցող համանունական խմբերը կոչում են տարբեր անվանումներով, իսկ տարբեր բնույթ ունեցող երևույթները հաճախ կոչում են մեկ տերմինով: Այսպես՝ տարբեր բառերի հարացուցային ձևերում հնչապես զուգահեռվող միավորներն առանց լրացուցիչ բնութագրման մի հեղինակ անվանում է «մասնակի համանունություն», մյուսը՝ «համահնչություն», երրորդը՝ «համաձևություն»: Որոշ դեպքերում տարբեր երևույթների նույնացումը բխում է մասամբ սոսյուրյան լեզվի և խոսքի փոխհարաբերության ոչ ճիշտ հաշվառումից, լեզվական և խոսքային պլանները հստակ չտարբերելուց, ինչպես նաև հարացուցային և շարակարգային հարաբերությունները շփոթելուց (օրինակ՝ тоску я—тоскую, стихия—стихи я տարբեր տիպի միավորները Գալկինա-Ֆեդորովը դիտում է որպես համաձևեր)¹⁴: Հարացուցային համանունությունը մերթ անվանվում է ձևաբանական համանունություն, մերթ՝ համաձևություն և այլն:

Համանունների սահմանման, ինչպես նաև նրանց հարող հասկացությունների սահմանազատման հարցում չկա միասնական

¹³ Н. М. Шанский. Лексикология современного русского языка, М., 1964, стр. 42.

¹⁴ Е. М. Галкина-Федорук, К вопросу об омонимах в русском языке, «Русский язык в школе», 1954, № 3, стр. 19.

սկզբունք ո՛չ դպրոցական դասագրքերում, ո՛չ բուհական ձեռնարկներում և ո՛չ էլ մենագրական ուսումնասիրություններում: Դա շափազանց դժվարացնում է բոլոր լեզուներին հատուկ լեզվական այդ երևույթի ուսումնասիրությունը: Գուցե համանուն բառերի ավելի խոր և բազմակողմանի քննությունը կոնկրետ լեզվի բառապաշարի համակարգում, ինչպես նաև նրանց գործառության քննությունը խոսքի մեջ (տարբեր կոնտեքստներում), կօժանդակեն լուծելու լեզվական այս երևույթի հետ կապված հիմնական հարցերը:

Ցուրաքանչյուր բառ ունի մեկ կամ մի քանի իմաստ, որը կազմում է տվյալ բառի առարկայական բովանդակությունը: Նման իմաստն անվանվում է բառական: Բառի մենիմաստությունը և բազմիմաստությունը կախված են տվյալ բառի բնույթից, տվյալ լեզվի համակարգում նրա գործառման եղանակից:

Ընդհանրապես բառի իմաստները իմաստային համակարգում ավելի շատ են, քան բառերը: Վ. Վ. Վինոգրադովը գրում է. «Փորձի կոնկրետությունն անսահման է: Հենց ամենահարուստ լեզվի միջոցները խիստ սահմանափակ են: Պարզվում է, որ լեզուն հարկադրված է կրել իմաստների անթիվ բազմություն այս կամ այն հիմնական հասկացությունների ռուբրիկայով, օգտագործելով կոնկրետ կամ կիսակոնկրետ գաղափարներ միջնորդական ֆունկցիոնալ կապերի հատկանիշով»¹⁵: Այստեղից բխում է բառի բազմիմաստությունը, որի համոզիչ օրինակները յուրաքանչյուր լեզվի բացատրական բառարանում տրված բառերի իմաստներն են:

Բառի իմաստային կամ ներքին կողմը նշանակության և գործածության փոխադարձ կապվածության մի բարդ համակարգ է: Բառի իմաստային տարողության (ОБЪЕМ) տարրերը (այսինքն՝ բազմիմաստ բառի իմաստների ամբողջությունը) տարբերվում են լեզվում հանդես գալու իրենց կայունության և ինքնուրույնության աստիճաններով, գործածության շրջանակներով: Բառի իմաստային կառուցվածքը ուսումնասիրելու համար անհրաժեշտ է որոշել բառի ներքին զուգորդումների փոխկապակցված իմաստային տարրերը, որոշել յուրաքանչյուր իմաստի լեզվական ձևը, տվյալ լեզվի բառիմաստային համակարգում հանդես գալու նրա դերը: Ընդ որում, կարևոր է նաև բառի ավելի կայուն, ավելի ընդհանուր իմաստների սահմանազատումը: Այդ կարևոր է բառի իմաստների

¹⁵ В. В. Виноградов, Русский язык, М., 1947, стр. 15.

թե՛ տարածամանակյա, և թե՛ համաժամանակյա քննության տեսակետից:

Բազմիմաստ բառի համակարգում առանձնապես տարբերվում է բառի հիմնական իմաստը, որը առարկայի, գործողության, վիճակի ուղղակի անվանումն է: Հիմնական իմաստն այն է, որ կախված չէ կոնտեքստից: Բառի կոնտեքստային օգտագործման ժամանակ արտահայտվում է ոչ միայն բառական շրջապատը, այլ նաև այն դեպքերն ու իրադարձությունները, որոնց մասին գրվում կամ խոսվում է: Պարտադիր չէ, որ բառի հիմնական իմաստը պատմականորեն առաջինը ծագած լինի:

Բառը փոխաբերական իմաստներով գործածելը սկզբում դառնում է բազմիմաստության, ապա՝ համանունության աղբյուր, որը տեղի է ունենում երկարատև, աստիճանական ընթացքով: Բազմիմաստ ենք համարում այն բառերը, որոնց իմաստները լեզվի զարգացման տվյալ կտրվածքում իմաստային տեսակետից կապված են, և այդ կապվածությունը պատճառաբանված է: Բառի իմաստներից յուրաքանչյուրն ունի իր առաջացման պատճառները և բառի հիմնական իմաստի հետ գտնվում է որոշակի հարաբերության մեջ:

Լեզվի էության, նրա կառուցվածքին վերաբերող ամենակարեւոր հարցերից մեկը համանունության և բազմիմաստության սահմանազատման հարցն է: Լեզվաբանության մեջ արդեն ապացուցված է, որ բառի սահմանները կարող են չխախտվել նրա բառիմաստային և դարձվածային տարբերակների առկայությամբ անգամ: Ուրեմն՝ հակադրվում են միանգամայն տարբեր երկու լեզվական երևույթներ, բազմիմաստություն՝ երկու և ավելի տարբեր իմաստների առկայություն մի բառի կազմում և ճամանունություն՝ երկու և ավելի միանգամայն տարբեր բառերի հնչյունական զուգադիպություն¹⁶: Այսինքն՝ համանունության և բազմիմաստության սահմանազատման համար հիմք են ընդունում այն, որ բազմիմաստության մեջ մտնում են միևնույն բառի մի քանի բառիմաստային տարբերակները, իսկ համանունության մեջ՝ միանգամայն տարբեր բառեր, որոնց նման արտասանությունը կամ հնչյունական զուգադիպությունը բացատրվում է լեզվական մի շարք պատճառներով: Առաջին հայացքից թվում է, որ վերոհիշյալ բնորոշումները բավական են «համանունություն» և «բազմիմաստություն» հասկացությունները սահմանազատելու համար: Սակայն լեզվից վերցրած կոնկ-

¹⁶ О. С. Ахманова, Очерки по общей и русской лексикологии, стр. 107.

րեւտ օրինակները հետազոտողին 'կանգնեցնում' են դժվարութեան առջև:

Ինչպե՞ս իմանալ, օրինակ, որ գլուխ—մարմնի մաս և ստեղծագործութեան գլուխ, տուն—բանաստեղծութեան քառատող և շինութեան, բնակավայր, ձի-երիվար և շախմատի ֆիգուր միավորները չեն կորցրել իմաստային կապը և բառի նույնութիւնը չի խախտվել: Ինչու՞ գաճի—«Հատուկ զարդարուն բարձրագիւր բազկաթոռ, որի վրա նստում է միապետը կամ հոգևոր պետը» և գաճ₂—«Գազաթ, կատար, դարի՛ ժայռի գլուխ, բարձունք, բարձր տեղ» կազմում են համանուններ, իսկ ջրածին—ջրում կամ ջրից ծնված և քիմիական տարր միեւնոյն բառի տարբեր իմաստներն են: Պարտք—պարտավորութիւն և պարտք—փոխարինարար մեկից մի բան վերցնելը, արդոք մի բառի տարբեր իմաստներն են, թե՞ տարբեր բառեր են: Կամ պղինձ—մետաղի տեսակ և պղինձ—պղնձե կաթսա միավորները նույն բառի տարբեր իմաստներն են, թե՞ տարբեր բառեր են: Այսպիսի օրինակներ բավական շատ են յուրաքանչյուր լեզվում, և բառարանագիրները հաճախ աշխատում են խուսափել երկու տիպի վտանգից. տարբեր բառերը արհեստականորեն չմիավորել մեկ հնչյունական միավորի տակ և մեկ բազմիմաստ բառը չտրոհել առանձին համանունների: Համանուն և բազմիմաստ բառերի սահմանազատման ժամանակ առանձնապես դժվարութիւն են ստեղծում այն դեպքերը, երբ բառերն արտահայտվում են բառադարձվածային և բառաշարահյուսական տարբերութիւններով: Այնհայտ է, որ այնպիսի իմաստները, ինչպիսիք են ծաղիկ—սև ծաղիկ, ալիք—իններորդ ալիք, ազատութիւն—խղճի, խոսքի ազատութիւն, բանաստեղծական ազատութիւն, ազգ—ազգ ու տակ, ազգ ու բարեկամ, ազգային—ազգային փոքրամասնութիւն, քամի—քամուն տալ, քաշել—շունչ քաշել, կապել—աչք կապել, կայծակ—կայծակ գործ, աղուն—գծի աղունն աստված 'կաղա (առած), իր աղունն աղալ, անուրդ—աճուրդի հանել, ամոք—ամոթից գետինը մտնել, ամոթից մեռնել, անկանոն—անկանոն կոտորակ, անկյունային—անկյունային հարված, անկողին—անկողին ընկնել և այլն, չի կարելի չառարանում տալ առանձին բառահոգւածներով, ինչպես իսկական համանունները, օրինակ՝ կույս₁—կողմ, կույս₂—աղջիկ, մարտ₁—մարտ ամիսը, մարտ₂—ճակատամարտ և այլն:

Քննութեան համար դժվարութիւն չեն ներկայացնում այն բառերը, որոնք առաջացել են միանգամայն տարբեր արմատներից

(կասկածելու դեպքում կարող ենք ստուգել ստուգաբանական բա-
ռարանով)։ Ինչպես՝ Խուլ₁—(բժշկական) ցավ չպատճառով պալար,
Խուլ₂—լսողությունից զրկված, Խոնջ₁—թեղ, կապ, Խոնջ₂—հոգնած,
Խոզ₁—կենդանի, Խոզ₂—ջրիմուռի մի տեսակ, հաբե₁—կպցնել,
հարակցել, հաբե₂—միանալ, հաբե₃—հնձել, մայր₁—ծնող,
մայր₂—ծառի տեսակ, քեր₁—կանաչեղենի տերևներ՝ «թերթ» բա-
ռից և քեր₂—կողմ, հոս₁—ոչխարի հոտ, հոտ₂—«հոտոտելիքով
ստացվող զգայություն, բույր» և այլն։

Դժվար չէ սահմանազատել այն դեպքերը, երբ համահնչուն
միավորների միջև եղած իմաստային տարբերությունը ուղեկցվում
է նաև քերականական ձևերի տարբերությամբ, այսինքն՝ ի նկատի
ունենք մասնակի համանունության դեպքերը, երբ բառերի տար-
բեր հարացույցներում հանդես են գալիս դրանց բառական տար-
բերակները և ծառայում իբրև արտաքին միջոց այդ բառերը ոչ
նույնական համարելու։

Քննության համար հատկապես դժվարություն են ներկայաց-
նում այն համանուն բառերը, որոնք առաջացել են բազմիմաստ
բառի տարբեր իմաստների իմաստային կապերի մթազնման կամ
կորստի հետևանքով։ Բայց հարցն ավելի է բարդանում այն իմաս-
տով, որ լեզվաբանության մեջ չկա միասնական կարծիք համա-
նունության և բազմիմաստության վերաբերյալ։ Լեզվաբաններից
ոմանք ընդհանրապես ժխտում են բառի բազմիմաստությունը։ Ա-
հա այդպիսի մի քանի կարծիքներ։ Ա. Ա. Պոտեբնյան բառի յուրա-
քանչյուր նոր գործածություն համարում է տարբեր բառ։ Այս տե-
սանկյունից էլ նա ժխտում է բառի բազմիմաստությունը։ «Որտեղ
երկու իմաստներ են, այնտեղ երկու բառեր են»¹⁷, Կամ. «Իրական-
նում կա միայն տարբեր բառերի համահնչունություն, այսինքն՝
այն հատկությունը, որ տարբեր բառեր կարող են ունենալ միևնույն
հնչյունները»¹⁸։

Նման կարծիքի է նաև Լ. Վ. Շչերբան. «Իրականում մենք
ունենք այնքան բառեր, որքան իմաստներ ունի տվյալ հնչյունական
բառը»¹⁹։

¹⁷ А. А. Потебня, Из записок по русской грамматике, том IV, М.—Л.,
1941, стр. 198.

¹⁸ Նույն տեղում։

¹⁹ Л. В. Щерба, Опыт общей теории лексикографии, «Известия АН
СССР. Отделение литературы и языка», 1940, № 3, стр. 107.

Լ. Ա. Աբաևը կարծում է, որ համանուն և բազմիմաստ բառերի միջև ոչինչ ընդհանուր չկա, համեմատելիություն և ոչ մի կետ. «Բազմիմաստությունը երբեք չի կարող համանունություն դառնալ, և հակառակը»²⁰։ Նա պատճառաբանում է, որ այդ երկու հասկացությունները չի կարելի շփոթել, դրա շփոթումը կհանդեցնի այն բանին, որ բառի յուրաքանչյուր կիրառություն կհամարվի նոր բառ և վերջապես լեզուն կճնշվի միայն համաժամանակյա սկզբունքով, անտեսելով պատմական կողմը։ Աբաևի մեկնաբանությունը, իհարկե, հարցի լուսաբանման միայն մի կողմն է և ճիշտ է միայն այն շահով, որ շահով հարցին մոտենում է պատմական լուծման տեսանկյունից։

Դժվար է համաձայնել այս կարծիքներին։ Ժխտել բառի բազմիմաստությունը, նշանակում է հեռանալ լեզվի օբյեկտիվ բնույթից, անտեսել այն հանգամանքը, երբ բառերի մեծ մասը համաժամանակյա պլանով օգտագործվում է մեկից ավելի իմաստներով, այսինքն՝ երբ միևնույն հնչյունական և գրային կոմպլեքսն օգտագործվում է որպես տարբեր իմաստների մեկ ամբողջություն, մեկ միավոր։

Որոշ լեզվաբաններ բառի նույնության և առանձնակիության (отдельность) հարցը փորձում են լուծել «լեզվական հոտառության» (интуитивная)։ Բայց այս դեպքում ևս հարցի լուծումը չի կարող ճիշտ արդյունք տալ։ Ինչպես էլ մենք մոտենանք այս հարցին, ամեն դեպքում պետք է բառը դիտել որպես իմաստային և քերականական ամբողջություն, պետք է հաշվի առնել, որ այն կարող է ձևափոխվել, հանդես գալ քերականական տարբեր ձևերով։

Այս հարցը ավելի ճիշտ է մեկնաբանել Ա. Ի. Սմիռնիցկին։ Նա նշում է, որ եթե ժխտենք բառի բազմիմաստությունը և բառական յուրաքանչյուր ոչ բազմիմաստություն համարենք համանունություն, ապա անհրաժեշտ կլինի տարբերել երկու տիպի համանուններ. 1) համանուններ, որոնք իմաստով սերտ կապված են, 2) համանուններ, որոնց միջև չկա բառիմաստային կապեր։ Եվ փոխանակ հակադրվելու բազմիմաստություն և համանունություն հասկացությունները, կհակադրվեն երկու տիպի համանունություններ (ДОЖ—շենք, շինություն, ДОЖ—բնակարան, КЛЮЧ—բանալի, КЛЮЧ—առվակ)²¹։

²⁰ А. А. Абаев, О подаче омонимов в словаре, ВЯ, 1957, № 3, стр. 40.

²¹ А. И. Смирницкий, К вопросу о слове («Проблемы тождества слова»), Труды ин-та языкознания АН СССР, 1954, т. IV, стр. 7.

Այս բոլոր տարակարծությունները բխում են նրանից, որ բազմ-
 իմաստության և համանունության սահմանազատումը տեսականո-
 րեն բարդ և չմշակված հարց է: Հնարավոր է, որ բազմիմաստ բա-
 ռի բառաիմաստային տարբերակները վերածվեն առանձին բառ-
 համանունների, օրինակ՝ այդպես են առաջացել հետևյալ համա-
 նունները. եղջերու—«Ճյուղավոր եղջյուրներ ունեցող կաթնասուն
 որոճող կենդանու արուն, արու եղնիկ», եղջերու—լուսաստղ, դի-
 վան—(հնց.) «Վավերագրեր պահելու հաստատություն, արխիվ,
 բարձրագույն պետական պաշտոնյաների խորհուրդը Արևելքում»,
 դիվան—«Նստելու և պառկելու փափուկ բազմոց», Գուլդ—
 (ռազմ.) «Մի քանի գումարտակներից կազմված ինքնուրույն զո-
 րամաս, զորք, զորախումբ», դուլդ (մաթ.) 1. շրջանագիծ, 2. այդ
 ձևն ունեցող առարկա՝ մարմին:

Թեև լեզվաբանական գրականության մեջ բավական արժեքա-
 վոր աշխատություններ կան բառի իմաստների, հասկացության
 և իմաստի տարբերության, ինչպես նաև սրանց հետ կապված այլ
 հարցերի վերաբերյալ, բայց ցայսօր համանունության և բազմի-
 մաստության սահմանազատումը, դրանց հարաբերությունը մնում
 է որպես լեզվաբանության հիմնական և չվճռված հարցերից մեկը:

Համանունության և բազմիմաստության սահմանազատման
 վերաբերյալ լեզվաբանության մեջ առաջարկվել են մի քանի
 սկզբունքներ: Համառոտակի անդրադառնանք այդ սկզբունքներին
 և փորձենք ստուգել, թե որը կարելի է կիրառել հայերենում՝ հաշվի
 առնելով վերջինիս յուրահատկությունները:

1. Պրոֆ. Ե. Մ. Գալկինա-Ֆեդորովը բազմիմաստության և
 համանունության սահմանազատման հիմքում դնում է բառական
 գործոն՝ հոմանիշային համապատասխանությունը և անհամապա-
 տասխանությունը: Խորհուրդ է տալիս համահնչուն բառերի կողքին
 ավելացնել համապատասխան հոմանիշներ: Եթե ավելացրած հո-
 մանիշները իրար նկատմամբ նույնպես հոմանիշ են, ուրեմն ունենք
 բազմիմաստություն, իսկ եթե հոմանիշ չեն, այդ դեպքում ունենք
 համանունություն: Բերում է հետևյալ օրինակը. ոռոսերենում հա-
 մանուն են КЛЮЧ—բանալի, КЛЮЧ—աղբյուր բառերը: Առաջինի
 համար հոմանիշ է ընտրում «ОТМЫЧКА», իսկ երկրորդի համար՝
 ручеек: Քանի որ «ОТМЫЧКА» և «ручеек» միավորները ոռոսերե-
 նում հոմանիշային հարաբերություն չեն կազմում, ուստի КЛЮЧ₁ և
 КЛЮЧ₂ բառերը համանուն են²², «իսկ եթե վերցնենք 2НЕЗДО ПТУЦ

²² Е. М. Галкина-Федорук, նույն տեղում, էջ 16:

և շեշծո ւեղուեա, ապա երկուսի համար կարելի է ընտրել յաւա-
ւաւ հոմանիշը, հետեւապես, այստեղ բազմիմաստութիւն է և ոչ
թե համանունութիւն²³, Փորձենք ստուգել այս սկզբունքը հայերեն
լեզվից վերցրած կոնկրետ օրինակների վրա: Հայոց լեզվում գոր-
ծածական են պարկ (բժշկական տերմին) և պարկ՝ (ընդհանուր գոր-
ծածական) բառերը: Առաջինին հոմանիշ են փուշիկ, բուշտ, իսկ
երկրորդին՝ ֆուսկ, տապալակ միավորները, քանի որ փուշիկ, բուշտ
բառերը հոմանիշային հարաբերութիւն չունեն պարկ, ֆուսկ բառե-
րի հետ, ուստի ըստ վերոհիշյալ սկզբունքի առկա է համանունու-
թիւն: Իսկ «հորատիչ մեքենա» և «հորատիչ բանվոր» երկու միա-
վորների համար կարելի է ընտրել «բրիչ» ընդհանուր հոմանիշը,
ուստի այստեղ գոյութիւն ունի բազմիմաստութիւն և ոչ թե հա-
մանունութիւն:

2. Ն. Ֆ. Շումիրովը առաջարկում է համանունութիւն և բազմի-
մաստութիւն սահմանազատման հիմքում դնել տարբեր բառակազ-
մական միջոցների, բառակազմական կաղապարների հնարավորու-
թիւնը: Ըստ նրա, բառի տարբեր իմաստները, հեռանալով և վե-
րածվելով անկախ բառերի, ստանում են տարբեր քերականական
արտահայտութիւն և տարբեր բառակազմական հնարավորութիւն:
Բերում է մի շարք օրինակներ, որոնց թվում նաև *кулак*₁—
բռնեցք, *кулак*₂—շահագործող, տնտեսատեր գյուղացի համա-
նունները, որոնք ծագել են բազմիմաստ բառի տարբեր իմաստնե-
րից: Այս բառերից յուրաքանչյուրը հանդես է գալիս տարբեր բառա-
կազմական հնարավորութիւններով: Եթե *кулак*₁ բառը կազմում է
кулачник, *кулачки*, *кулачище* ձևերը, ապա *кулак*₂ կազ-
մում է *кулачник*, *кулачество*, *кулачье*, *подкулачник* ձևերը:
Այս երկու բառերը զուգադիպում են միայն մեկ ձևում՝ *кула-
чок*²⁴:

Փորձենք ստուգել այս սկզբունքը հայերենում: Իբրև օրինակ
վերցնենք գունդ—կլոր մարմին և գունդ—գորագունդ բառերը: Այս
երկու ձևերն ակներևաբար ունեն քերականական նմանութիւններ,
քանի որ գոյական են, հոլովվում են, կարող են գործածվել և՛
եզակի, և՛ հոգնակի թվերով և նախադասութիւն մեջ հանդես գալ
նույն պաշտոններով: Յուրջ տանք նաև, թե ինչ բառակազմական

²³ Նույն տեղում:

²⁴ Н. Ф. Шумилов, К вопросу о разграничении полисемантизма и омо-
нимии, «Русский язык в школе», 1956, №3, стр. 33.

հնարավորություններ ունեն երկու իմաստներով: Հայերենում գործածական են գունդ-ով (կլոր մարմին) կազմված գնդաձև, գնդանալ, գնդանման, գնդել, գնդիկ, գնդլիկ, գնդասեղ, գնդառանցքալավ միավորները: Ըննչարանի առաստաղից կախված գնդաձև լապտերն իր միապաղաղ, կարմիր ապակու միջից մեղմ լույս էր տարածել սենյակում» (ՆԴ): «Ես բախտ ունեցա սեփական աչքով տեսնել երկրի գնդաձևությունը» (մամուլ): «Կթվորուհին գետնից պոկեց գնդացած հողի մի կտոր» (մամուլ): «Խմորը գնդելու ժամանակ է, թե՛ չէ» (ՀԲ): «Գործակատարները գցում են նրա վրա հացի գնդիկներ» (Շր): «Մի փոքր անց գնդլիկ մի մարդ գլորվելու շարժումներով վազեց, եկավ» (ԴԴ): «Ես թանգարանի սրահներով քայլում էի գնդառանցքալավների գործարանի մի խումբ բանվորների հետ» (մամուլ): «Գնդասեղի մեծությամբ կապտավուն հատիկներով լի ողկույզներ էին կախված մի քանի մետր երկարությամբ ունեցող մատներից» (ԱՍ): Գունդ-ը (զինվորական գնդի իմաստով) բառակազմական քիչ հնարավորությունների ունենք գնդացրիվ, գնդանհամաճատար, գնդապետ, գունդ-գունդ, գնդային ձևերը (վերջին երկուսը ընդհանուր է նաև («գունդ»-ի համար): «Դրանցից ամեն մեկի առաջ կանգնած է յուր գնդապետը զրահազգեստ և առնական զեն ու զարդով» (Մ): «Ուրիշ տեղերից խաղաղակյաց ժողովուրդներ գունդագունդ հայոց երկիրը գաղթեցին» (Մ): «Գնում են կրկին ժայռերը գունդ-գունդ, զարնվում նավերին ու տանում անդունդ» (ՂԱ):

Ինչպես ցույց են տալիս բերված օրինակները, հայերենում համանուն և բազմիմաստ բառերը չի կարելի սահմանազատել միայն բառակազմական սկզբունքով: Ծիշտ է, բազմիմաստ և համանուն բառերը հանդես են բերում մասնակի բառակազմական յուրահատկություններ, բայց հաճախ է պատահում նաև, որ տարարմատ համանուն բառերը բառակազմական հատկանիշներով զուգադիպում են:

3. Առաջարկվել է նաև «շարահյուսական մոտեցման» սկզբունքը, ըստ որի համանուն բառերն ունեն տարբեր շարահյուսական կիրառություն: Այս սկզբունքը միանգամայն մեխանիկական է: Հայերենում համանուն են, օրինակ, դատելի—ադատական կարգով քննել մեկի գործը և վճիռ կայացնել» ներգործական սեռի և դատելի—աշխատել, գործ անել, չեզոք սեռի բայերը: Այս բայերից առաջինը, որպես ներգործական սեռի բայ, պահանջում է ուղիղ խնդիր լրացում: Երկրորդը, որպես չեզոք սեռի բայ, չունի այս

հատկանիշը: Բայց կարելի՞ է արդյոք այդ բայերը համանուն համարել լոկ այն պատճառով, որ մեկը չեղոք սեռի է, մյուսը՝ ներգործական: Այս բայերն ունեն բառական տարբեր իմաստ, արտահայտում են տարբեր գործողություններ, բառային մակարդակում հանդես են գալիս միանգամայն անկախ իմաստով՝ որպես ավարտուն միավորներ: Հենց այս հատկանիշն է ընկած տվյալ բառերի համանունության հիմքում և ոչ թե նրանց շարահյուսական կիրառությունը:

Բերված փաստերն ակնհայտորեն ցույց են տալիս, որ հայերենում ձևաբանական, շարահյուսական հատկանիշները միասին վերցրած հնարավոր չէ դնել համանունության և բազմիմաստության սահմանազատման հիմքում՝ որպես լեզվական երկու տարբեր երևույթների սահմանազատման ընդհանուր հիմք և բնականաբար իբրև բոլոր համանուն և բազմիմաստ բառերը միմյանցից տարբերելու միասնական չափանիշ:

Ուրեմն՝ «շարանյութական» և «բառակազմական» սկզբունքները բացառակ լինել չեն կարող: Դրանք կարող են լինել սոսկ լրացուցիչ, երկրորդական միջոց՝ համանունության և բազմիմաստության սահմանազատման հարցում: Իսկ «շարանյութական» սկզբունքը վտանգավոր է նաև այն տեսակետից, որ մեխանիկորեն համանունների շարքին կարող են դասվել տարբեր խոսքի մասի պատկանող բազմիմաստ բառի իմաստները և կրկնապես բայերը:

Պատահում է նաև, որ շարահյուսական և ձևաբանական ցուցիչները բացակայում են կամ շատ դեպքերում էլ այդ ցուցիչների առկայությամբ անգամ չի վճռվում հիմնական հարցը՝ Որպեսզի որոշենք, թե ենթակա՞ «վերադասին պաշտոնական ծառայության» ենթարկվող անձ» և «ենթակա» «քերականական տերմին» կամ եռանկյունի՝ «եռանկյունաչափական պատկեր» և եռանկյունի «եռեք անկյուն ունեցող» տարրեր բառեր են, թե՞ մի բառի տարբեր իմաստներ, անհրաժեշտ է իմանալ, թե տվյալ զույգերով ինչպես են արտահայտվում իրական առարկաներն ու երևույթները: Այդ կրթահայտի նաև հայերեն լեզվի իմաստային համակարգի մի կողմը, թե որքանով են լեզվի տարրերը տերմինաբանական կիրառություն գտնում: Այդ ձևով կարելի է որոշել նաև փոխառությունները, բառապատճենումները և դրանց միջև եղած իմաստային հարաբերությունները: Հայերենում, ինչպես նաև որոշ այլ լեզուներում, ընդունված է պարունակվածն արտահայտել պարունակողով, առարկան և երևույթը արտահայտել առարկայի կամ երևույթի

քերականական հատկանիշով, առարկան կամ առարկաների խում-
րըն արտահայտող բառը փոխարինել այդ առարկայի մի մասը կամ
առանձին առարկա արտահայտող բառով և այլն: Նման երևույթնե-
րի առկայությունը հայերենի համակարգում թույլ է տալիս ասե-
լու, որ այդ տարբեր իմաստները միավորվում են մեկ բառի ի-
մաստային կառուցվածքում:

4. Համանունության և բազմիմաստության սահմանազատման
«միջանկյալ օղակի» սկզբունքը առաջարկել է պրոֆ. Ռ. Ա. Բու-
դաղովը²⁵ և զարգացրել՝ Ա. Ա. Նովիկովը²⁶: Այդ սկզբունքը հիմնա-
վորում են բառի պատճառաբանվածությանը, տարբեր իմաստների
հաջորդականությանը և ընդհատականությանը: Եթե բառի ձևա-
վորված իմաստը, որ շղթաներից մեկի օղակն է, հանդես է գալիս
«միջանկյալ օղակի» դերով, այդ ժամանակ իմաստների ներքին
կապը և պատմականորեն պատճառաբանված հաջորդականությու-
նը խախտվում է, և բառը վեր է ածվում համանունության: Օրինակ
է բերվում *середѧ* բազմիմաստ բառը ռուսերենում: Այդ բառը նախ
կորցրել է իմաստներից մեկը (*середина*, որը անվանվում է «մի-
ջանկյալ օղակ»), ապա այդ իմաստի կորուստը պատճառ է դարձել
մնացած իմաստների տրոհման (*день недели* և *окружение*): Ա-
ռաջինը իմաստային կապը պահպանել է *средним* բառի հետ, իսկ
երկրորդը միանգամայն հեռացել է նրանից:

Այս սկզբունքը հետաքրքրական է այն տեսակետից, որ խո-
սում է բազմիմաստության տրոհման հետևանքով համանունու-
թյան առաջացման մասին: Սակայն դա բազմիմաստ բառից համա-
նունների առաջացման հնարավոր ձևերից մեկն է, և համանունու-
թյան առաջացման համար ոչ բոլոր դեպքերում է անհրաժեշտ «մի-
ջանկյալ օղակը»: Հաճախ բառի իմաստներն այնքան են մթա-
զրնվում, որ դժվար է լինում որոշել «միջանկյալ օղակը»: Հետևա-
պես, այդ տեսակետը ևս չի կարող որոշիչ սկզբունք ծառայել հա-
մանունության և բազմիմաստության սահմանազատման հարցում:

Համանունությունը և բազմիմաստությունը, որպես լեզվա-
կան երևույթներ, գտնվում են փոխադարձ կապի և փոփոխության
մեջ: Եթե բառերն իմաստով այնքան են հեռացել, որ նրանց միջև

²⁵ Р. А. Будагов, О так называемом «промежуточном звене» в смысло-
вом развитии слов, «Сборник статей по языкознанию», изд. МГУ, 1958,
стр. 72—85.

²⁶ А. А. Новиков, Об одном способе разграничения полисемии и омонимии, «Русский язык в школе», 1960, № 3, стр. 10.

դժվար է ընդհանուր որևէ բան դնել, չնայած դրանք ծագում են նույն, սկզբնական իմաստից, ապա այդ բառերը դառնում են համանուն: Բառը կարող է ունենալ մի քանի իմաստներ: Այդ իմաստների միջև գոյություն ունեն զուգորդական կապեր: Որոշ դեպքերում այդ զուգորդական կապերը կարող են թուլանալ և հանգեցվել համանունության: Թեև համանունությունը և բազմիմաստությունը տարբեր երևույթներ են, բայց դրանք ընդհանուր կողմեր ունեն, որոնք արդյունք են այն բանի, որ բազմիմաստության տրոհումը և համանունության առաջացումը տեղի է ունենում ոչ թե հանկարծակի, այլ երկարատև ժամանակի ընթացքում: Եվ ամեն դեպքում լինում են անցման ընթացքի մեջ գտնվող բառեր, որոնց համար էլ հնարավոր չէ կիրառել բացարձակ որևէ սկզբունք և սահմանադրուել համանունությունը և բազմիմաստությունը: Դժվար է մտածել նաև այնպիսի սկզբունքի մասին, որ հավասարապես կիրառելի լինի բոլոր լեզուների համար: Ամեն դեպքում որևէ սկզբունքի կիրառման ժամանակ պետք է հենվել տվյալ լեզվի իմաստային համակարգի, լեզվի յուրահատկությունների և կոնկրետ նյութի վրա: Հայերենի համանուն և բազմիմաստ բառերի քննությունը մեզ համոզում է, որ լինում են դեպքեր, երբ բազմիմաստության սահմանները բացարձակ չեն և որոշ դեպքերում «համանուն» և «բազմիմաստ» տերմինները պետք է ընդունել հարաբերականորեն:

Եզրակացություն. համանուն բառերի պատմական քննությունից պարզվում է, որ բազմիմաստությունից համանուն բառերի առաջացման երկարատև ընթացքը, որին նախորդում են բառի իմաստային կառուցվածքի փոփոխությունները, ունենում է անցումային ձևեր, որոնք աստիճանաբար ձեռք են բերում բառական կայուն իմաստներ: Բազմիմաստ բառի այդպիսի իմաստները պայմանականորեն կարելի է անվանել ճամանունացման ենթակա իմաստներ: Հենց այդպիսի իմաստների դեպքում է, որ դժվարություն է ստեղծվում համանուն և բազմիմաստ բառերի սահմանազատման ժամանակ:

Համահնչուն բառերի հարաբերությունը շատ հետազոտողների, մանավանդ բառաբանագիտների, կողմից որոշվում է նրանց պատմական զարգացման տեսանկյունից ելնելով: Այս, իհարկե, ճիշտ է: Սակայն շատ դեպքերում նրանք ունենում են նաև բնորոշ առանձնահատկություններ, որոնք չի կարելի հաշվի չառնել: Այդ առանձնահատկությունների հաշվառումը և քննությունը հնարավորություն կտան ավելի ճիշտ որոշել ծագումնաբանորեն կապված

համահնչուն բառերը և ներառել դրանք բառարանում՝ որպես ինքնուրույն բառարանային միավորներ:

Այսպիսով, համանուն և բազմիմաստ բառերի սահմանազաման հարցում պետք է ելնել այն հիմնական սկզբունքից, որ նույն հնչյունական կազմ ունեցող որոշ ձևեր բառական մակարդակում հանդես են գալիս որպես ինքնուրույն, անկախ միավորներ: Բառային մակարդակում այդ միավորների քննության ժամանակ պետք է անտեսել խոսքի մեջ նրանց ունեցած հարաբերությունները, նրանց թեքման ձևերը և վերցնել դրանք սոսկ որպես անվանողական միավորներ:


5. Համանունների հետ կապված որոշ հարցեր, այդ թվում նաև համանուն և բազմիմաստ բառերի հարցը փորձել են լուծել նաև կառուցվածքային լեզվաբանության դիրքերից:

Հայտնի է, որ կառուցվածքային լեզվաբանության ներկայացուցիչներն իրենց վերլուծումների հիմքում դնում են Սոսյուրի հիմնական գաղափարները և ձգտում են մշակել այնպիսի մեթոդներ, որոնք հնարավորություն տան հարմար սխեմաների ստեղծմամբ նկարագրել ավելի մեծ երևույթների բազմաձևությունը, ներանց միջև եղած կապերի համասեռությունը: Այս տեսակետից բնորոշ են Կուրիլովիչի աշխատանքները, որոնք զարգացնում են Կարցևսկու «Լեզվական նշանի երկակի անհամաչափության մասին» աշխատության մեջ արտահայտված մտքերը²⁷:

Հետևողականորեն կիրառելով «նույնության-տարբերության» սկզբունքը, Կարցևսկին ընդունում է, որ յուրաքանչյուր լեզվական նշան ունի իր իմաստը և այն պետք է պահպանի իր նույնությունը ամենատարբեր կիրառություններում: Բայց շատ դեպքերում պարզվում է, որ նշանը կարող է ծածկել նոր պատկերացումների մի ամբողջություն՝ կորցնելով իր նույնությունը: Այստեղից նա եզրակացնում է, որ նույնության կորուստը կամ համանունների ծագումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ նրա իմաստային փոփոխությունը, որը նշանակվում է նշանով, հասնում է իր բովանդակության թուլատրելի սահմանին: Նշանի էական հատկանիշը նա համարում է լեզվի համակարգում ունեցած նրա բնական դերը: այն, որ նշանը կարող է միաժամանակ մտնել երկու շարքի մեջ՝ ճամանունների և ճովանիշների: Այստեղից էլ եզրակացնում է, որ

²⁷ Karcevski, Du dualisme asymétrique du singe linguistique. ETCLP, 1, 1929.

ընդհանուր առմամբ նշանը ստեղծվում է այդ երկու շարքերի հակադրումից: Օրինակ է բերում ձուկ բառի կիրառումները: Ձուկ բառի համարժեքային իմաստը համարում է *piseis* (ձուկ կենդանի), իսկ եթե բնորոշեն մարդուն, կասեն սառը, ֆլեգմատիկ, անկենդան և այլն: Հակառակ ընդհանուր իմաստ՝ հասկացությանը, Կուրիլովիչը մտցնում է «առաջնային», «երկրորդային» իմաստներ հասկացությունները, փորձելով որոշել իմաստների ֆունկցիաների ստորակարգությունը: «Ընդհանուր իմաստ» հասկացությունը Կուրիլովիչը անվանում է վերացական: «Ընդհանուր իմաստ» տերմինի փոխարեն նա կիրառում է գլխավոր իմաստ՝ տերմինը, դրա տակ հասկանալով բառի անկախ, կոնտեքստից դուրս արտահայտած իմաստը, օգտագործում է նաև «մասնակի իմաստ» հասկացությունը, դրա տակ հասկանալով գլխավոր իմաստին ավելացրած կոնտեքստային նրբերանգները: Այս բոլորը ի մի բերելով, Կուրիլովիչը բառապաշարի այդ շարքի իմաստային կառուցվածքը պատկերում է հետևյալ սխեմայով.



Այս դեպքում Կուրիլովիչը ընդունում է բազմիմաստություն-հոմանիշություն, իսկ Կարցևսկին՝ համանունություն-հոմանիշություն: Ձուկ բառի առաջին իմաստը համարում է գլխավոր, իսկ ձուկ բառի երկրորդ իմաստը՝ (ֆլեգմատիկ) երկրորդական, փոխաբերական: Ձուկ բառի կողքին «ֆլեգմատիկ» բառի երկրորդական

փոխաբերական իմաստի հանդես բերումը վկայում է երկու բառերի միջև եղած իմաստային հարաբերության մասին: Ձուկ բառի ֆունկցիան *piseis* բառի իմաստում անվանում է առաջնային, իսկ «ֆլեգմատիկ» իմաստում՝ երկրորդային՝ որպես ֆունկցիաների ստորակարգություն: Ֆունկցիաների նույնության և ձևերի տարբերության դեպքում առաջնային է համարվում ֆլեգմատիկ ձևը, իսկ ձուկ ձևը՝ երկրորդական: Ինչպես երևում է բերված օրինակներից և վերևում շարադրվածից, Կուրիլովիչը ավելի հետևողականորեն է տարբերում համանունություն-հոմանիշություն շարքը՝ բազմիմաստություն-հոմանիշությունից:

Նշելով կառուցվածքային լեզվաբանության մեջ՝ նշանի նույնության և տարբերության մասին ունեցած պատկերացումներից, որոշ լեզվաբաններ բազմիմաստ բառի տարբեր իմաստների հեռացումը բնորոշում են որպես բառի իմաստային փոփոխություն և փորձում են ցույց տալ այդ իմաստների փոփոխության սահմանները. օրինակ C_1 և C'_1 ավանակ—կենդանի, ավանակ—համառ: Հենց որ C_1 իմաստի փոփոխությունը ձգտում է հասնել այնպիսի աստիճանի, որ գտնում է ուրիշ բառ նույն իմաստով, այդ աստիճանը արտացոլում է C'_1 կետով, մենք ասում ենք, որ հասել է փոփոխության աստիճանը: C_1 և C'_1 արդեն համահնչուն բառեր են՝ համանուններ»²⁸:

Չնայած լեզվաբանության տեսության մեջ արտահայտած այս կարծիքներին, այնուամենայնիվ, գործնականում դժվար է որոշել բառի իմաստային փոփոխության սահմանները, որոնց թվում նաև բազմիմաստ և համանուն բառերի փոփոխության աստիճանը: Մնում է ենթադրել, որ ամեն դեպքում, երբ իմաստների միջև չի կարելի կամ հնարավոր չէ տեղագրել տիպիկ իմաստային կապեր, որոնք տեղադրվեն մեկ բառի համակարգում, ունենա համանունություն: Եթե բազմիմաստ բառի իմաստները պատմական զարգացման ընթացքում դարձել են նոր բառ-համանունների իմաստային կենտրոններ, ապա ժամանակակից լեզվում այդ իմաստների միջև չեն նկատվում բազմիմաստ բառի իմաստներին հատուկ ստորադաս և ենթաստորադաս կապեր:

²⁸ Ю. С. Степанов, Основы языкознания, М., 1966, стр. 55.

Համանունությունը օրինաչափ երևույթ է լեզվի համար. «Ամբողջ լեզվական մեխանիզմը,—գրում է Ֆ. Դ. Սոսյուրը,—պատվում է բացառապես նույնությունների և տարբերությունների շուրջը, ընդ որում այդ վերջինները առաջինների սոսկ հակառակ կողմերն են»²⁹։ Բառը որպես լեզվի իմաստակիր միավոր և հասարակության հաղորդակցության կարևորագույն միջոց երևան է գալիս իր որոշակի նյութական կազմով։ Լեզվի համակարգի համար կատարյալ կլինեն, եթե լեզվական յուրաքանչյուր իմաստակիր միավոր թարտաքին կազմով ևս լինեն սահմանազատված և տարբերակված։ Բայց աշխարհի ոչ մի լեզու օժտված չէ նման հատկությամբ։ Ամենահարուստ լեզուն անդամ ի վիճակի չէ յուրաքանչյուր կոնկրետ իմաստ արտահայտել ինքնուրույն և առանձին միավորներով։ Սակայն, ինչպես մեկնաբանել այն փաստը, որ որոշ լեզվաբաններ համանուն բառերի առկայությունը բառապաշարի համակարգում դիտում են որպես բացասական երևույթ։ Փորձենք թերթել լեզվաբանության պատմության էջերը և ծանոթանանք տարբեր լեզվաբանների կողմից համանուն բառերի վերաբերյալ արտահայտած մի քանի կարծիքների։

Համանուն բառերը, նրանց առաջացման աղբյուրները և գործածության հարցերը հետաքրքրել են նաև ֆրանսիացի հայտնի բարբառագետ Ժիլբերոնին և նրա հետևորդներին³⁰։

Ժիլբերոնը իր ուսումնասիրությունների ընթացքում նկատել է, որ որոշ բառեր դուրս են եկել ֆրանսերենի բառապաշարի համակարգից սոսկ այն պատճառով, որ հնչյունական փոփոխությունների հետևանքով արտասանությամբ զուգադիպել են այլ բառերի հետ։ Այստեղից նա եզրակացնում է, որ հնչյունական փոփոխությունները կործանարար են բառերի համար։ Ժիլբերոնը և նրա հետևորդները գտնում են, որ լեզուն «համբերատարությամբ» տանում է համանունությունը շնորհիվ այն բանի, որ համանուն բառերից շատերն ունեն տարբեր հատկանիշներ, ինչպես. 1) համանուն զույգերը պատկանում են տարբեր խոսքի մասերի. *cher*—թանկագին, *սիրելի*, *la chaire*—ամբիոն. 2) համանուն զույգերն ունեն

²⁹ Փ. de Соссюр, Курс общей лингвистики, М., 1953.

³⁰ J. Gillieron et Roques, Revue de philologie et Littérature, Paris, 1910. J. Gillieron et Roques, Etudes de géographie linguistique, Paris, 1912. Dauzat, La géographie linguistique, Paris, 1922.

տարբեր սեռ. la livre—ֆունտ (ծանրության չափ և դրամական միավոր), le livre—գիրք, 3) համանուն զույգերը գրությամբ տարբեր են. le champ—դաշտ, le chant—երգեցողություն:

Հնդհանրապես ժիլյերոնը լեզվական փոփոխությունների կարևոր պատճառներից մեկը համարում է այն, որ խոսողը ձգտում է պարզության և հասկանալիության: Ըիշտ բացատրելով համանունության հետ կապված շատ հարցեր, ժիլյերոնը և նրա հետեւորդները, սակայն, առաջ էին քաշում նաև այն տեսակետը, որ համանունությունը «ախտաբանություն» է և կարիք ունի բուժման միջոցառումների: Բառիմաստի գերծանրաբեռնվածությունը, արտահայտչականության կորուստը դիտում են որպես «իմաստային հիպերտրոֆիա»: Նրանց կարծիքով հնչյունական փոփոխություններն ախտաբանական գործոններ են, որոնք կարող են բառը հասցնել թուլության, մինչև անգամ կորստի և համանունության: Եթե համանուն բառերը «տանելի» են, մնում են բառապաշարում, իսկ եթե «անտանելի» են, նրանցից մեկը կորչում է:

1922 թվականին Անգլիայում հրատարակվում է Բրիջեզի մենագրությունը անգլերենի համանունների վերաբերյալ³¹, Հեդինսկիր, ուսումնասիրելով համանունների առկայությունը անգլերեն լեզվի բառապաշարի համակարգում, հանգում է այն եզրակացության, որ համանուն բառերը լեզվի համար «չար», «ինքնակործանարար», «գոթբախտ» երևույթներ են: Բրիջեզի կարծիքով արտասանությամբ համընկնող և իմաստով տարբեր բառերը ստեղծում են «երկիմաստություն»: Նրա կարծիքով հաղորդակցության ժամանակ երկիմաստության տեղիք չեն տալիս միայն տարբեր խոսքի մասերին պատկանող համանուն բառերը, քանի որ դրանց կիրառության դեպքում տեղի չեն ունենում շարահյուսական կանոնների շեղումներ:

Նման կարծիքներ են արտահայտվել նաև ոռու դրականության մեջ. Լ. Ա. Բուլախովսկին իր 1928 թվականին գրած «Համանունների մասին» հոդվածում դասակարգելով տարբեր տիպի համանունները, միաժամանակ նշում է, որ լեզուն «համբերատարությամբ» տանում է բազմաձև համանունների առկայությունը³²:

Ա. Ա. Ռեֆորմատսկին գրում է, որ հազիվ թե ճիշտ լինեն այն հեղինակները, որոնք համանունության առաջացումը համարում

³¹ Bridges, On English Homophones Society for pure English, Oxford, 1922, vol. 1, tract 2.

³² А. А. Булаховский, Из жизни омонимов, «Русская речь», новая серия, 111, Ленинград, 1928.

են բառապաշարի հարստացման միջոց, Համանուն բառերի՝ լեզվում կատարած միակ դրական դերը տեսնում է անեկդոտների և բառախաղերի գործածության մեջ: «Մնացած բոլոր դեպքերում,— գրում է նա,— համանունները խոշորագույն են փոխըմբռնման համար»³³: Ավելին. «Համանունները բոլոր դեպքերում անախորժ, անդանազանելի բառերն են, որոնք պետք է որ զանազանվեն»³⁴: Սակայն, լեզվի տարբերակվող տենդենցները, ինչպես ճիշտ կերպով նկատել է Ռ. Ա. Բուդաղովը, չի կարելի հասկանալ մակերեսորեն. «Այնպես, ինչպես լեզվում կան մի բառի սահմանում տարբերակվող տարբեր իմաստներ (բազմիմաստություն), գոյություն ունի նաև տարբեր բառերի տարբերակում միևնույն արտասանության սահմաններում (համանունություն): Տարբերակումը շոշափում է ոչ միայն լեզվի արտաքին, այլև ներքին կողմերը՝ պայմանավորելով նրանց բազմաթիվ գործառությունները: Բառերի միջև եղած տարբերությունները ոչ միշտ կարող են կապված լինել արտասանության տարբերությամբ նաև այն պատճառով, որ լեզվի բառերը անսահմանորեն շատ են, իսկ հնչյունների քանակը համեմատաբար սահմանափակ է: Համանունները «հիվանդագին բառեր» համարող լեզվաբանները արդարացի կլինեին միայն այն դեպքում, եթե լեզուն իրենից ներկայացնեք մաթեմատիկական համակարգ»³⁵:

Հայերեն լեզուն հարուստ է համանուններով: Արդյոք այդ բառերը հայերենի համար «հիվանդագին» երևույթ են և հաղորդակցության ընթացքում տեղի՞ք են տալիս թյուրիմացության և երկիմաստության: Այս հարցին պատասխանելու համար քննենք դրանք հայոց լեզվի համակարգում, հատկապես՝ 1) որոշենք նրանց տեղը բառապաշարի համակարգում, 2) կիրառումը խոսքի մեջ կամ գործառությունը խոսքի ընթացքում:

Համանուն բառերը ժամանակակից հայերենի բառապաշարի համակարգում

Բառապաշարի համակարգում բառերի միջև գոյություն ունեն զանազան կապեր, որոնց շնորհիվ բառապաշարը կազմում է փոխ-

³³ А. А. Реформатский, Введение в языковедение, 1967, стр. 89.

³⁴ Տե՛ս նույն հեղինակի Введение в языкознание, Учпедгиз, М., 1960, էջ 65:

³⁵ Р. Л. Будагов, Омонимия и значение слова, «Сравнительно семасиологические исследования», М., 1963, стр. 242.

կապակցված, մի սերտ ամբողջություն: Այդ ամբողջության մեջ համանուն բառերը կազմում են համանունական խմբեր, որոնք կոնկրետ լեզվի բառային համակարգում հանդես են գալիս որպես բառական համակարգի փոքր ենթահամակարգեր: Ցուրաքանչյուր համանունական խումբ կազմվում է երկու, երեք, չորս և ավելի բառերից (երբեմն նաև բառաձևերից):

Ըստ միավորների քանակային կազմի՝ ժամանակակից հայերենի համանունները կարելի է ստորաբաժանել հետևյալ խմբերի՝ 1) երկանդամ, 2) եռանդամ և 3) քառանդամ:

Ժամանակակից հայերենում ամենից շատը երկանդամ համանունական խմբերն են, որոնք կազմում են ամբողջ համանունական խմբերի 93,6 տոկոսը, երկրորդ տեղն են գրավում եռանդամ համանունական խմբերը, որոնք կազմում են ամբողջ համանունական խմբերի 5,4 տոկոսը, արևուհետև գալիս են քառանդամ համանունական խմբերը՝ 1 տոկոսը:

Երկանդամ համանունական խմբերի օրինակներ

համր₁—մունջ, անխոս, համր₂—դանդաղ, կուտ₁—ամուր, կուտ₂—բազուկ, լուռ նստում ենք պուրակում, համր ու անխոս հեռանում» (ՎՏ): «Մինչ օրերն են համր հոսում, մտքի հետ է միտքը խոսում» (ՊՄ): «Հեծան իրենց նժույզները, կուռ կապեցին զենք ու զրահ» (Տ): «Կպարզեն նրանք թշնամուն անարգ, Դավթի կուտը քաջ՝ իմ ընկերներին» (ԳՄ):

Նաանդամ համանունական խմբերի օրինակներ

պուտ₁—սույս, ծաղիկ, պուտ₂—կաթիլ, պուտ₃—խալ, կետ, ծիրանի₁—բուռնագույն, ծիրանի₂—ծիրանենի, ծիրանի₃—արքայական ծիրանագույն պատմուճան, «Սարի լանջին պուտերի խումբն էր կարմրին տալիս» (ԱԲ): «Ջանգի-Ջրանգի, հենց հուպ տվեք, հենց կուլ տվեք. որ մի պուտ արյուն չկաթի» (ՂԱ): «Ոսկեփետուր սև հավը, թևերին սև պուտեր թռչում էր քարից քար, կանչում» (ԱԲ): «Բորբոքում է օջախն իր հին, Մխում է ծուխն ծիրանի» (ՀՄ): «Մի վիթխարի ծիրանի փող առանց հին ահի ու նոր խնդության հնչեցնում է մեր արդար երգերը» (ԱԲ): «Չանցավ մի քանի վայրկյան, իրոք երևաց թագավորը՝ ծիրանին ուսերին» (ՍԶ):

Քառանդամ համանունական խմբերի օրինակներ

Հարկ₁—շենքի այն մասը, որ տեղադրված է միևնույն բարձրության վրա, հարկ₂—կարիք, հարկ₃—տուրք, հարկ₄—պաշտոնական հացկերույթ, հարկինք, հոն₁—հոնի ծառի պտուղը, հոն₂—արտը հնձելիս յուրաքանչյուր հնձվորի բաժինը, հոն₃—ասիական հին ժողովուրդ, հոն₄—(արևմտահայերեն) այնտեղ, Վարի հնչյուն, երգ լսվի քո հարկի տակ հավիտյան» (ՀՀ), «Հարկ չկա երկար պատմելու» (ԵԶ), «էս գյուղերը հարկ են տալիս ամեն միներ մի արքայի» (ՀԹ), «Ուլը մորթե, հարկ արա, հարսնությունը թարկ արա» (առած), «Բայց եթե հոնի մուրաբա ունես, մի լավ թեյ կխմեի» (ԲՎ), «Հոնածը, հնձվորների առաջնորդը... այուր» մանգաղով բաց էր անում հոն» (Բ), «Հորդանները խույժ հոնների ակոսել են փերեն անծիր» (ԱԻ), «Հոն կա մոխիր... հիշատակ» (ՊԴ),

Պատահում են նաև հինգ և նույնիսկ վեց միավորից կազմված համանունական խմբեր, այս դեպքում, սակայն համանունական խմբերի մեկ կամ երկու անդամները լինում են բարբառային կամ հնացած բառեր, ինչպես միավորից կազմված համանունական խմբի օրինակ է՝ ակ₁—թանկագին քար, ակ₂—ակունք, ակ₃—անիվ, ակ₄—թոնրի օդանցք, սնդու, ակ₅—մեղվի փեթակի անցքը:

Քանի որ համանունական խմբի բոլոր անդամները բովանդակության պլանում ունեն հակադրական հարաբերություններ, արտահայտության պլանում՝ նույնական հարաբերություններ, հետևապես բառական համանունների ուսումնասիրության ժամանակ պետք է հաշվի առնել բովանդակության պլանում հանդես բերած որոշակի ընդհանրությունները և տարբերությունները: Հնարավոր է ուսումնասիրման այս եղանակով բացահայտել հայերենի համանուն բառերի իմաստային առանձնահատկությունները համաժամանակյա կտրվածքով, որոշել իմաստների քանակը, տիպերը, փոխհարաբերությունները և նրանց տեղը հայերենի բառապաշարի համակարգում:

Ամենից առաջ ցույց տանք հայերենի համանուն բառերի ամենացայտուն իմաստային տարբերությունները և ընդհանրությունները, որոշենք նրանց տեղը բառապաշարի շերտերում: Քանի որ համանուն բառերի ամենացայտուն իմաստային տարբերություններն արտահայտվում են բառական տարբեր դաշտերի պատկանելությամբ, ապա հարմար է նրանց իմաստային տարբերությունները որոշել հենց այդ դաշտերի սահմաններում:

Բառական տարբեր դաշտերի պատկանող համանունություն կարող է կազմվել այն դեպքում, երբ համանուն բառերից մեկը

բույսի անուն է, մյուսը՝ այլ անուն, ինչպես՝

զանգիկ₁—զանգակածաղիկ, զանգիկ₂—լեղվակ, զարմու-
նի₁—պերճածաղիկ, զարմունի₂—հորեղբոր աղջիկ, ֆուր₁—ջրասեր
ծաղիկ, ֆուր₂—իրանական լեզվախմբին պատկանող ժողովուրդ,
սպանդ₁—վայրի փեղհնա, սպանդ₂—սպանություն, կոտորած, կա-
պար₁—փշոտ և զետնատարած բույս, կապար₂—արճիճ, տորմ₁-
թունավոր խոտ, տորմ₂—տորմիղ, խտուա₁—խատուտիկ բույսը,
խտուա₂—խտղտանք, խոստում₁—խրխնդուկ բույսը, խոստում₂-
երդում և այլն:

Մեկը բույսի անուն է, մյուսը կենդանու, թռչունի, միջատի,
ինչպես՝

արոս₁—արոսենի, արոս₂—տաք երկրներում ապրող թռչուն,
երինջ₁—երնջակ բույսը, երինջ₂—երրորդ տարվա էգ հորթը, զամ-
բուռ₁—վաղամեռուկ, զամբուռ₂—իշամեղու, փաղարիկ₁—բույսի ա-
նուն, փաղարիկ₂—ջրային թռչուն, փրփրուկ₁—օճառախոտ, փրփր-
ուկ₂—ձկան տեսակ, սարդ₁—սարդենի, սարդ₂—մորմ, տատ-
րակ₁—բույսի տեսակ, տատրակ₂—երգող թռչնակ, խառնիճ₁-
մատուտակ, խառնիճ₂—մորեխի մի տեսակ:

Մեկը թռչունի, կենդանու անուն է, մյուսը՝ այլ անուն,
ինչպես՝

զատիկ₁—փոքր միջատ, զատիկ₂—քրիստոնեական տոն, կապուտ₁-
ձկան տեսակ, կապուտ₂—ավար, իշխան₁—ձկան տեսակ, իշ-
խան₂—ֆեոդալական ազնվականական բարձր դասին պատկանող
անձի տիտղոսը:

Մեկը նվագարանի անուն է, մյուսը՝ այլ անուն, ինչպես՝

ֆանոն₁—երաժշտական գործիք, ֆանոն₂—գծափայտ, լիրա₁—քնար,
լիրա₂—դրամական միավոր, թառ₁—արևելյան նվագարան, թառ₂-
հավերթ թառելու ձողափայտ:

կարելի է ասել, որ այս ձևով բովանդակության պլանում հակադրվում են ժամանակակից հայերենի դրեթե բոլոր համանուն բառերը: Ուրեմն, կարելի է կարծել, որ հայերենի համանուն բառերը մեծ մասամբ պատկանում են իմաստային տարբեր դաշտերի:

Բացի վերը նշված հիմնական հակադրություններից, շատ համանուն բառեր հակադրվում են նաև լրացուցիչ այլ հատկանիշներով: Այդ մեծ մասամբ լինում է այն դեպքերում, երբ համանունական խմբի անդամները պատկանում են բառական տարբեր ենթահամակարգերի:

Բառապաշարի համակարգում բառական ենթահամակարգերը փոխադրում են մեկը մյուսին, ներթափանցում են միմյանց մեջ: Լեզվի ամբողջ բառապաշարը կազմում է բաց համակարգ, այդ համակարգի մեջ բառական խմբերը հանդես են գալիս որպես մեկ կամ մի քանի հատկանիշով հարաբերակցվող փոքր ենթահամակարգեր, որոնց տարբերություններն ու հակադրությունները զուգակցվում են նմանություններով: Շատ հաճախ էլ այդ ենթահամակարգերի տարբերակման սահմանները լեզվում արտահայտվում են ոչ այնքան պարզությամբ ու կանոնավորությամբ, ուստի երբեմն դժվար է լինում կոնկրետ ձևով սահմանազատել, որոշել այդ ենթահամակարգերը: Բայց և անպես, «համակարգ» հասկացությունը օգնում է մեզ ավելի լավ պատկերացնելու այն բարդ, ամբողջական մեխանիզմը, ինչպիսին լեզուն է, որի բաղկացուցիչ մասերը, տարբեր մակարդակները և նրանց տարրերը գտնվում են փոխադարձ կապի, փոխալայմանավորվածության և փոխազդեցության մեջ: «Համակարգ» հասկացությունը օգնում է նաև ավելի լավ պատկերացնելու, թե ինչու լեզվում գոյություն ունեն համանուն բառեր, ինչպե՞ս են առաջանում դրանք, ինչպե՞ս է լեզուն հանդուրժում նրանց առկայությունը, ինչպե՞ս են նրանք սահմանազատվում միմյանցից և այլն:

Համանուն բառերի բառական իմաստները կազմում են լեզվի ընդհանուր համակարգի մի մասը: Դրանք ձևավորվում են լեզվի այլ կողմերի հետ համակցված: Լեզվի իմաստային համակարգը խոշոր դեր է կատարում առանձին բառերի ձևավորման գործում: Այս տեսակետից բառ-համանունները պետք է դիտել ոչ թե բառերի առանձին խումբ՝ կտրված լեզվի բառապաշարից, այլ բառապաշարի համակարգում, նրանց փոխադարձ հարաբերություններում:

Յուրաքանչյուր լեզվում կան բառական տարբեր ենթահամակարգեր, որոնք իրարից տարբերվում են որևէ հատկանիշով:

Ա) ըստ հասարակագիտական հատկանիշի բառային համակարգում հակադրվում են ընդհանուր գործածական բառերը և մասնագիտական բառերը:

Բառային կազմում բոլոր բառերը միևնույն դերն ու նշանակությունը չունեն հաղորդակցման համար: Շատ բառեր կենսականորեն անհրաժեշտ են հանրության բոլոր անդամների համար: Այդ բառերից շատերը գտնվում են համանունական խմբերի կազմում: Համանուն բառերի մոտ 71,1%-ը գտնվում է բառապաշարի այս ենթահամակարգում: Ընդ որում, բառապաշարի այդ ենթահամակարգին կարող են պատկանել համանունական խմբի կա՛մ մեկ անդամը, կա՛մ բոլոր անդամները: Եթե համանունական խմբի բոլոր անդամները պատկանում են բառական միևնույն ենթահամակարգերին, ապա այդ անդամների իմաստային տարբերությունն արտահայտվում է բառական տարբեր դաշտերի պատկանելությամբ: Այդ բառերից են՝ շիշ—գինու սրվակ, շիշ2—շամփուր, տապակ1—թավա, տապակած կերակուր, տապակ2—մաս, շերտ, պտուկ1—կճուճ, պտուկ2—նոր շյուղ, ծաղիկ, ֆոֆոց1—գնդասեղ, ֆոֆոց2—անասուններին քորելու հարմարանք, «Մի շիշ դինի էր խոստանում Գյուրջի Օբուն» (ԱՌ): «Հարկավոր է մի լավ տաք շիշ այդ անասունին» (Բ): «Դա մի երկար կոթով տապակ էր, մեջը խոզի ապուխտ շարդած» (ՎՓ): «Բայց նա ընդհակառակը, պատրաստում է ոչխարի մսից տապակ, մտածելով, որ դա ավելի էժան է և համեղ» (Բ): «Թաքնվել էր խոտի տապակ(ի) մեջ, մոտեցա, որ տապակը շուռ տամ, միջից դուրս թռավ և սրտաճաք արեց մեզ» (ՍԽ): «Գարնանը սիրենի թարմ պտուկները բացվելու ժամին հոգիս երգել է նրանց ճիթերի առաջին շնչի հետ» (ՀԿՐ): «Ժամ առաջ տեսած սևակուղ պտուկները, որոնց մեջ կերակուր էին պատրաստում, չէին հեռանում նրա աչքերից» (Մ): «Աղամանդի ֆոֆոցը կրծքի վրա... ընդունում էր հյուրերին» (Բ): «Նա առեց ֆոֆոցը և սկսեց քորել յուր քուռակը» (Բ):

Ըստ քանակի (6,9%) բառապաշարի համակարգում 3-րդ տեղն են զբաղում այն համանունական խմբերը, որոնց մեկ կամ երկու անդամը պատկանում է մասնագիտական բառապաշարին: Հայտնի է, որ յուրաքանչյուր լեզվի բառապաշարում կան բավական շատ բառեր, որոնք վերաբերում են տարբեր մասնագիտությունների: Գիտության, տեխնիկայի, արտադրության, ար-

վեստի յուրաքանչյուր բնագավառ ունի բազմաթիվ բառեր, որոնք կազմում են մասնագիտական տերմինաբանություն: Բառական այգ ենթահամակարգի բառերը հակադրվում են ընդհանուր գործածական բառերին: Օրինակ՝ գազել₁—բանաստեղծական ձև, գրականագիտական տերմինը համանուն է գազել₂—վիթ, բառին, որը գործածվում է գրական լեզվում: «Տերյանը հայկական քնարերգության մեջ համարձակորեն և վարպետորեն օգտագործեց և կատարելության հասցրեց սոնետը, տրիոլետն ու գազելը» (մամուլ): «Լեռան գազել(ի) ջինջ աչքերի պես հրեղեն էին աչքերը նրա» (Գէ): Ցամաֆ, բառը՝ «երկրագնդի չոր մակերևույթը», հակադրվում է ընդհանուր կողմից գործածական ցամաֆ բառին՝ անջուր, չոր: «Մի մասը եկել էին ցամաֆ(ի), մյուս մասը՝ ծովային ճանապարհով» (Բ): «Թեկլեն ցամաֆ աչքերով... սկսեց սգալ իր որդու մահը» (ՆԻ):

Մասնագիտական և ընդհանուր գործածական բառերի հարաբերությամբ ստեղծված համանունությունը կարող է ըմբռնվել տվյալ լեզվով հաղորդակցվող հասարակության ոչ բոլոր անդամների կողմից, քանի որ համանունական խմբի անդամներից մեկը կարող է անծանոթ լինել ոչ մասնագետին: Հետևաբար, վերջինիս համար այդպիսի համանուն բառերը շփոթ չեն առաջացնի: Շփոթ չեն առաջացնի նաև համապատասխան մասնագետների համար, քանի որ վերջիններս տեսականորեն գիտեն իրենց մասնագիտությանը վերաբերող տերմինի իմաստը: Բայց այլ մասնագիտություն ունեցող մարդկանց համար մասնագիտական բառահամանունները կարող են տարբեր կերպ ընկալվել, նայած թե տվյալ մասնագիտական բառը որքանով է հասկանալի իրենց: Մասնագետը ավելի շուտ կըմբռնի այն բառը, որը վերաբերում է իր մասնագիտությանը, օրինակ՝ դիվանագետը նախա բառը առաջին հերթին կըմբռնի որպես «քաղաքական հայտագիր», իսկ երաժիշտը՝ որպես «ձայնանիշ»: Կամ եթե երկաթգծի սլաքավարը լսի սլաֆ բառը, առաջին հերթին կպատկերացնի երկաթգծի այն հատուկ սարքավորումը, որով փոխում են գնացքի ուղղությունը մի գծից մյուսը, իսկ ոչ մասնագետը սլաքա ասելով առաջին հերթին կպատկերացնի որոշ սարքավորումների կամ ժամացույցի ցուցիչը:

Երբեմն պատահում է, որ տարբեր մասնագիտություններին վերաբերող բառերը հանդես են գալիս մեկ հնչյունական կազմով: Բայց չի պատահում, որ այդ բառերը սխալ փոխըմբռնման կամ

թյուրիմացությունների հիմք դառնան, քանի որ նրանց գործածության շրջանակները միանգամայն տարրեր են: Օրինակ՝ ռազմական բառապաշարին վերաբերող գունդ՝ զորամաս բառի գործածության շրջանակները շատ հեռու են գունդ մաթեմատիկական տերմինի գործածության շրջանակներից:

Կան մի շարք համանունական խմբեր, որոնց անդամներից մեկը վերաբերում է՝

ա) ֆիզիկային, երկրաչափությանը, տեխնիկային

դռո₁—անվադող, դռո₂—սարսուռ, մխոց₁—մեքենայի շարժական գլան, մխոց₂—մեղուններին ծուխ տալու գործիք, դիզել₁—«ներքին ալրման շարժիչ», որ աշխատում է հեղուկ վառելանյութով», դիզել₂—կիտեռ, սեղան₁—երկրաչափական պատկեր, սեղան₂—հարմարանք, որի վրա ճաշում, գրում կամ աշխատում են:

բ) քիմիային

գազ₁—քիմիական մարմին, գազ₂—շղարշ, գազ₃—բույսի անուն, գազ₄—երկարության չափ, գառիկ₁—անմետաղական մարմին, գառիկ₂—որպես բուժական միջոց օդտագործվող դեղնագույն հող, տերմիտ₁—փոշենման ալյումինի խառնուրդը որոշ մետաղների թթվուկների հետ, տերմիտ₂—միջատ:

գ) Հանգստությանը

պորփյուր₁—ծիրանաքար, պորփյուր₂—արքայական ծիրանի, ծանրաբաշիկ₁—տրապազիոն, ծանրաբաշիկ₂—դժվարատար:

դ) Ճարտարապետությանը

թաղ₁—աղյուսներով կամ քարերով ագուցված կամարածեծածկ, թաղ₂—թաղամաս, թաղ₃—այգեթաղ, կամար₁—աղեղնածեղինվածք, կամար₂—գոտի:

ե) Գյուղատնտեսությանը

ֆաղվածֆ₁—հնձելու, քաղելու կերպը, ֆաղվածֆ₂—մեջքերում, բնային₁—բներով կատարվող, բնային₂—բնին վերաբերող (լեզվք.) բառաբներով կազմված, ծայրաթաղ₁—վազերի ծայրերը հողով թաղելը, ծայրաթաղ₂—ծայրային թաղամաս, «Ավելի բար-

ձեր բերք ստանալու համար նրանք այգիները պարարտացրել են խորը բնային հղանակով» (մամուլ)։ «Դաղբաշյանի բառարանը բնային հղանակով է կազմված» (ԺՀԼԲԲ), «Մայրաքաղ անելիս հույսը գնում են ձյան ծածկոցի վրա» (գասազիրք)։ «Վերջապես... հասավ երբեմնի ծայրաքաղը, մտավ ընդարձակ մի փողոց» (մամուլ)։

զ) Երաժշտությանը

բաս₁—թավ ձայն, բաս₂—իհարկե, հապա, ստոր₁—հայկական ձայնագրության մեջ տեղութային նշան, ստոր₂—ցած։

է) Լեզվաբանությանը

արիական₁—հնդեվրոպական, արիական₂—քաջին հատուկ, «Արիական ճյուղը բաժանվում է երկու մասի՝ հնդկական և իրանյան» (ԱԾ)։ «Հափշտակության մեջ էր գտնվում իր հարսնացուի ցույց տված արիական վարմունքից» (Մ)։ Բուք₁—կետադրական նշան, բուք₂—ոչ սուր, բուք₂—բթամատ, «Տրոհության նշաններն են վերջակետը, միջակետը, ստորակետը և բուքը» (ԳՍՀԼԵ)։ «Արտակին կարծես բուք գործիքով հարվածեցին» (ԴԴ)։ «Քսայուղով կեղտոտված բուքը մի երկար հետք թողեց ճակատի վրա» (ԲՎ)։ Ղասական₁—քերականական տերմին, ղասական₂—կլասիկ, «Ղասական թվականները կազմվում են -րորդ կամ -երորդ վերջածանցներն ավելացնելով բացարձակ թվականներին» (ՍԱԺՀԲ)։ «Նա զգուշացավ գովել Նզնիկին նրա բարձր մտքի և ղասական ոճի համար» (ԴԴ)։

ը) Բժշկությանը

բոր₁—ուրկախտ, բոր₂—քիմիական տարր, ֆոս₁—մաշկային հիվանդություն, ֆոս₂—քարաքոս, փառ₁—աչքի հիվանդություն, փառ₂—(կրոն) փառաբանական մեղեդի, կաթիկ₁—լերդացավ, կաթիկ₂—կաթնաբանչար, կայծռոկ₁—բորբոքում մեջքի և ծոծրակի վրա, կայծռոկ₂—գիշերային միջատ, խոզուկ₁—կոկորդացավ, խոզուկ₂—խոճկոր և այլն։

թ) Կազմախոսությանը

խոռոց₁—սրունքի փոքր ոսկորներից մեկի անունը, խոռոց₂—ձկան լայնակի կտրված կտորներից յուրաքանչյուրը. «Կարծես ուղոքն ու խոռոցն իրար կպած պահելու համար վուջի պարանոլ

էին կապկպված (ԳՍ), «Թավով ջուր են դնում... որ մի քանի խոտոց կողակ խաշեն» (ՏՆՀԺՀ), Գեղծ₁—մարդու և կենդանիների օրդան, որն արտադրում է օրգանիզմի համար կենսականորեն անհրաժեշտ կամ արտաթորում ոչ պիտանի նյութեր, գեղծ₂—պարիլակ կոչվող բույսը:

Բ) Շատ համանուն բառեր (13,1 %-ը) հակադրվում են տերիտորիալ հատկանիշով, այսինքն՝ համանունական խմբի անդամներից մեկը ընդհանուր է հայերենով արտահայտվող յուրաքանչյուր անձի համար, մյուսը գործածական է միայն արևմտահայ գրական տարբերակում: Այս տեսակետից համանունական խմբի անդամները հակադրվում են, երբ մեկ անդամը գործածական է արևելահայ գրական լեզվում, մյուսը՝ արևմտահայերենում:

Հնարավոր է, որ համանունության այս տիպը ընկալվի հասարակության ոչ բոլոր անդամների կողմից: Եթե արևելահայ գրական տարբերակով հաղորդակցվող մարդուն անծանոթ է համանունական խմբի մեկ անդամը (տվյալ դեպքում արևմտահայերենում գործածվող բառ-համանունը), ապա նրա համար համանունական այս խումբը գոյություն չունի: Եվ ընդհակառակը, եթե արևմտահայերենով խոսող մարդուն անծանոթ է արևելահայերենում գործածվող համանուններից մեկը, ապա նրա համար ևս համանունական այս խումբը գոյություն չունի: Այդպիսի համանունական խմբերից են դաշնակ₁—դաշնամուր, դաշնակ₂—դաշույն, դաշնակ₃—դաշնակցական. «Վահրամ նստած էր դաշնակին առաջ» (ԱԱ), «Դաշնակ ու նշտար ցցված են սրտումս» (ՄՇ), «Դաշնակները կարմիր բանակի հարվածներից ջախջախվել էին ու փախել Արաքսի մյուս կողմը» (ՄԽ), Անալի₁—անելանելի, անալի₂—անաղի, «Որ ժպրհի ձգտիլ, սուզիլ խորն երկնի, ելնել աստղերու սանդուղքն անալի» (ՊԴ), «Երբեմն կրակ էին անում և փոքրիկ թոնրի մեջ ջաղացի անալի բլիթներ թխում» (ԱԲ), Քանակ₁—քանոն, ֆանակ₂—թիվ, քանակություն. «Վարժուհին իր սեղանին առաջ անցած մեկ ձեռքով անվերջ ֆանակը կզարներ սեղանին» (ԶԵ), «Հայաստանը պատերազմից կորցրել է իր ձիերի և անասունների ֆանակը» (ՍԶ):

Նման համանունական խմբերից են նաև՝ փոստալ₁—թեթեվաբարո կին, փոստալ₂—հնամաշ գլխարկ, ապրիլ₁—ապրել, ապրիլ₂—ապրիլ ամիսը և այլն:

Գ) Կան համանունական զույգեր կամ եռյակներ (4,5 %-ը), որոնց եզրերից մեկը գտնվում է հնացած բառերի շարքում, այ-

սինքն՝ համանունական խմբի անդամներն իրար հակադրվում են ժամանակագրական սկզբունքով: Այսպես՝ երեսունվեց համանունական խմբերի անդամներից 47-ը պատկանում է հնացած բառերի շարքին: Ընդ որում, ավելի շատ են այն համանունական խմբերը, որոնց միայն մեկ անդամն է հնացած: Քանակով քիչ են այն համանունական խմբերը, որոնց անդամներից երկուսը հնացած բառեր են: Երկու դեպքում էլ խոսքը վերաբերում է ոչ թե այն բառերին, որոնք անհետացել են հայերենի գործածական բառապաշարի համակարգից, այլ նրանց, որոնք շարունակվում են գործածվել ժամանակակից հայերենում, բայց ունեն գործառական որոշակի սահմանափակություն: Դրանք հիմնականում այն բառերն են, որոնք պատկանում են բառական հնարանությանը:

Բառական հնարանության շերտին պատկանում են զանազան տիպի բառեր, որոնք պետք է հստակորեն տարբերել իրարից: Ամենից առաջ պետք է տարբերել բառական հնարանության երկու հիմնական խումբ. 1) պատմական բառեր և 2) իմաստային ճնարանություններ:

Առաջին խմբի մեջ մտնում են այն բառերը, որոնք արտացոլում են հին կենցաղը պատկերող իրերն ու երևույթները, որոնք ներկայումս գոյություն չունեն, վերացել են: Այդ բառերը մեծ մասամբ պատկերացում են տալիս անցյալի միջավայրի, մտածելակերպի մասին և օգտագործում են այն հեղինակները, որոնք իրենց ստեղծագործություններում պատկերում են պատմական անցյալը: Այս բառերից շատերն իրենց համանունն ունեն ժամանակակից հայերենում, ինչպես այս₁—շար ոգի, այս₂—քամի, այս₃—սա: «Այս բառը վերին Հայաստանում գործածվում է սատանա նշանակությամբ, իսկ ստորին Հայաստանում՝ քամի նշանակությամբ» (ԱՃ): «Պապը նրա տերևների շարժումից կարող էր անսխալ որոշել, թե այս գիշեր, ինչ եղանակ է լինելու» (Մհ): Քեշ₁—զրադաշտական կրոն, քեշ₂—անձրևից կամ ջրելուց հետո հողի այն վիճակը, երբ կարելի է մշակել. «Արյաց հարձակումն ստիպեց ինձ քեշին ընդդեմ ճառել» (ԴԴ): «Յուրաքանչյուր անգամ ջրելուց հետո հողի քեշի ժամանակ պետք է միջշաքային տարածությունները փխրեցնել» (դասագիրք): Բութակ₁—մետաղ հալելու կավն աման, քուրա, բութակ₂—երաժշտական լարային գործիք. «Ածուխների մեջ ծածկված էր մի մեծ բութակ, որի մեջ հալվում էր մետաղ» (Բ): «Իր պարտասուն և թուլացած ջիղերը հիմա օրհասական ժամին պրկումովը կը գալարվեին նվագարանի

մը մաշած թելի պես, որին կոտորիլը՝ բուքակին անգամ մըն ալ դառնալուն կը նայի» (ԳԶ)։

Նման բառ-համանուններից են նաև՝ ագատագիւն₁—փրկագին, ագատագիւն₂—ազատ կերպով, պայիկ₁—բերդի պահապան զինվոր, պայիկ₂—մարդուց սերված առասպելական կենդանի, պարս₁—պարսատիկ, պարս₂—մայր փեթակից բաժանվող և ձագ տվող մեղունների խումբը, պտղի₁—տուրք, պտղի₂—կնձնի (ծառ) և այլն։

Երկրորդ խմբի կամ իմաստային հնարանության մեջ մտնում են այն բառերը, որոնք թեև պահպանել են իրենց նախկին ձևը՝ հնչյունական կազմը և արտասանությունը, բայց ժամանակակից հայերենի համար հնացած են։ Այս բառերից շատերը նույնպես ժամանակակից հայերենում ունեն իրենց համանունը, ինչպես՝ դռնակ₁—քղանցք, փեշ, դռնակ₂—պետության կամ որևէ կազմակերպության խորհրդանշան. «խրճիթի կիսաբաց դռնից տեսնում էր, թե ինչպես լվացվեցավ նա, թե ինչպես շապկի լայն դռնակով սրբեց երեսը» (Բ)։ «Տներն Վրա արդեն ծփում էր դռնակնե-րի ծովը» (ԱԲ)։ Կույս₁—կողմ, կույս₂—անարատ աղջիկ. «Առաջին շինվածքի բակի հարավային ճակատում է սրահը, մի երեք կուսից պարսպով պատած» (Բ)։ «Լեռների այս հարազատ կույսը մի սիրուն աղջիկ էր» (Բ)։

Այդպիսի համանուններ են նաև.

անդ₁—այնտեղ, անդ₂—հանդ, արևադեմ₁—արևածաղիկ, արևադեմ₂—արևակողմ, ցանկ₁—ցանկապատ, ցանկ₂—ցուցակ, մայրի₁—անտառ, մայրի₂—սոճազգիների ընտանիքին պատկանող ծառ, վառ₁—զարդարուն քող, վառ₂—շարականի ութ ձայներից մեկը, վառ₃—պայծառ, հռլվ₁—շատ, հռլվ₂—(քեր.) բառի կրած փոփոխության յուրաքանչյուր ձևը, ուտ₁—կռան, ուտ₂—ստինք, ուտ₃—ճյուղ, որթ և այլն։

Համանուն բառերի շարքում շատ քիչ են նորաբանությունները։ Կան ընդամենը մի քանի համանունական խմբեր, որոնց անդամներից մեկը վերաբերում է հասարակական կյանքի նոր երեվոյթներին և հասկացություններին։ Ընդ որում այդ բառերից մի քանիսն օգտագործվել են նաև հին հայերենում, բայց ժամանակակից լեզվում ձեռք են բերել նոր իմաստներ և անկախացել որպես ինքնուրույն բառական միավորներ, ինչպես՝ օղակ₁—փոքրիկ օղ, օղակ₂—կոլտնտեսային աշխատանքներ կատարող միավորում. «Օղակավարը հրապարակում է օղակի յուրաքանչյուր անդա-

մի կատարած աշխատանքի ծավալը» (մամուլ): «Ամեն սյունի մեջ այստեղ մի օղ կա, և ամեն օղակն ունի մի շղթա» (ՀԹ): Դաշնակցական₁—դաշինքին՝ համաձայնության վերաբերող, դաշնակցական₂—ձայն բուրժուա-նացիոնալիստական հակահեղափոխական դաշնակցության կուսակցության անդամ: «Խամսայի բոլոր հին իշխանությունները կազմում էին մի ամբողջ դաշնակցական միություն» (Բ) «Մենք ևս... դաշնակցականներին համարում ենք հայ ժողովրդի մատնիչներ և հայ աշխատավորների ու հեղափոխության մատնիչներ» (ՎՏ): Մսուր₁—ախոռ, մրսուր₂—մանկամսուր, պարեա₁—վերակացու, պարեա₂—հիմնարկության կամ շենքի հսկիչ:

Դ) Մի քանի համանունական խմբեր (ամբողջ համանունական խմբերի 4,4%-ը) այլ համանունական խմբերի հակադրվում են ոճական սկզբունքով, այսինքն՝ մի քանի բառական համանուններ, արտահայտելով միանգամայն տարբեր բառական իմաստներ, տարբերվում են նաև ոճական կիրառություններով և հուզարտահայտչական զանազան երանգներով: Այդ բառերը պատկանում են լեզվի տարբեր շերտերին և ունեն գործածության տարբեր ոլորտներ: Այս տեսակետից համանունական խմբերը բնորոշվում են նրանով, որ նրանց անդամներից մեկը (կամ երկուսը) պատկանում է՝ 1) բառապաշարի բանաստեղծական ենթահամակարգին, 2) հազվադեպ կիրառվող բառերի թվին և 3) կենցաղային-խոսակցական բառերի թվին:

Առաջին խմբի բառերն ավելի մոտ են, այսպես կոչված, «հանդիսավոր բառերին»: Այդ բառերը խոսքին տալիս են հանդիսավորություն և ավելի շատ օգտագործվում են «բարձր» ոճի ստեղծագործություններում, հատկապես չափածո խոսքում: Այդպիսի բառերից կազմված համանունական խմբերից են. քաղաքապետ₁—քաղաքապետ, քաղաքապետ₂—մեծ պատիվ, փառք ունեցող. «Քաղաքապետ Աբուլն ու Մթին սարեր Մեջք մեջքի տված կանգնել վեհափառ Իրենց ուսերին, Ջավախքից էլ վեր Բռնած պահում են մի ուրիշ աշխարհ» (ՀԹ): «Ասում են, թե դու արդեն բանաստեղծ ես, քաղաքապետ» (ՀՇ):

Այդպիսի համանուններից են նաև՝ ծանրաճակ₁—ծանրորեն հակված, ծանրաճակ₂—ծանր հակերից, փաթեթներից կազմված, լուսագին₁—լուսեղեն, լուսագին₂—եկեղեցում մոմ վառելու համար տրվող վճար, լուսակաթ₁—ուր կամ երբ լույս է կաթում (վայրի, ժամանակի մասին), լուսակաթ₂—լուսեղեն կաթ ունե-

ցող, համասփյուռ₁—համատարած, համասփյուռ₂—բույսի անուն
և այլն:

Երկրորդ խմբի բառերին պատկանում են համանունական
խմբի այն անդամները, որոնք համեմատաբար ավելի հազվադեպ
են կիրառվում կենցաղային և գործնական բնույթի խոսակցու-
թյուններում: Այդ բառերից շատերը ժամանակակից հայերե-
նում ունեն իրենց ավելի գործածական հոմանիշը, ինչպես՝ սո-
րել—սողալ, պարզունակ—սողնակ, եղկ—ողորմելի, խղճուկ,
խշխշալ—կսկծալ, մորմոքվել, սպաս—սպասավորություն, քարք-
ակնթարթ, քամֆ—սրի պատյան, բոհ—անշեն, խավար:

Նման բառերից կազմված համանունական խմբերից են, օրի-
նակ՝ սորել₁—հոսել, սորել₂—սողալ: «Այդ «ոչ»-ըդ սուր սրտես
սորեց արյուններ» (ՄՄ): «Նա օձի նման սորել է մերկարմատ
ծառերի ստորին խողուններում» (Բ): Եղկ₁—գաղջ, տաքուկ, եղկ₂—
խղճուկ: «Գետակ մը ջինջ կաթի պես և եղկ անոր հանգունակ»
(ԴՎ): «Երեկվա եղկ ձորերում կանչեց ահա մի շլակ» (ԳՄ): Խըշ-
խըշալ₁—կսկծալ, մորմոքվել, խշխշալ₂—խշխշոց հանել: «Հսում էր
Հասուն, սիրտը խշխշում, ածում էր ածում, նվազն ուժեղացնում»
(Վրթ. Փ.): «Խշխշաց զգեստը, ինչպես թե քամին անցավ չոր խո-
տերի վրայով» (ԱԲ): Սպաս₁—սպասավորություն, սպաս₂—թա-
նապուր. «Ես հիմա նրա սպասին եմ» (ԴԴ): «Հողի գավաթի մեջ
սառած սպասից մի քանի գդալ ուտելուց հետո թիկնում էր
բարձին և ննջում» (ԱԲ): Պարզունակ₁—սողնակ, պարզունակ₂—
պարզ, անպաճույճ. «Խորին ուշադրությամբ զննում էր փականք-
ները, նայում էր ամուր նիդերին ու շոշափում հաստ սողնակներն
ու պարզունակները» (Բ): «Աշտը տեսավ, թե ինչպես նրա պար-
զունակ աչքերը արցունքը պղտորեց» (մամուլ):

Երրորդ խմբին պատկանում են այն բառերը, որոնք ավելի
շատ գործածվում են սովորական առօրյա խոսակցություններում,
առանձնապես այն դեպքերում, երբ խոսողը մտերմական հարա-
բերությունների մեջ է գտնվում իր զրուցակցի հետ: Թեև այդ բա-
ռերը չեն խախտում գրական լեզվի նորմաները, բայց չեն կիրառ-
վում պաշտոնական և գործնական բնույթի խոսակցություններում:
Այդ բառերից են օրինակ ցանել, սիրուն, սկել, շանաֆ, շանչ և
այլն: Այս բառերից կազմված համանունական խմբերից են. ցա-
նել₁—հնարագիտությամբ մեկին իր մոտից հեռացնել, ցանել₂—
սերմանել. «Հորեղբայր դու ուզում ես ինձ ցանել... Վուր տեղը
հոգուդ վրա մի վերցնի» (ԼՄ): «Նա կուզենար գեղեցկություն ցա-

նել ծաղկի պես և հիանալ նրա աճը տեսնելով» (ՎՍ), Սիրուն₁— սիրուն₂, ի սեր, սիրուն₂—գեղեցիկ. «Այո, միացել է հայրենիքի սիրուն» (ՍԶ). «Արուսից ավելի սիրուն կին մեր շրջանում չկա» (ՆԶ), Ջանչ₁—անհծք, շանչ₂—հատիկները պոկած խաղողի ողկուղները, ճղել₁—պատռել, ճղել₂—փախչել, շանաֆ₁—ոչ կատակ, լուրջ, շանաֆ₂—բամբակաքաղ, սկել₁—սուզվել, սկել₂—խազի մեջ տանել, քոքոշ₁—փափիկ, քոքոշ₂—շրեշ:

Հայերենում կան բավական թվով համանուն բառեր, որոնցից մեկը մտնում է մի շարք դարձվածաբանական միավորների և կայուն բառակապակցությունների մեջ, որտեղ մյուսը հանդես դալ չի կարող. ահա այդպիսի մի քանի օրինակներ.

տալ₁—ամուսնու քույրը
կնոջ համար:

դաս—հասարակական խումբ,
դասակարգ,

մատ—չախմատի խաղում այնպիսի վիճակ, երբ արքան ծուղակի մեջ է, որը նշանակում է պարտություն:

Կան նաև մի քանի համանունական զույգեր և եռյակներ, որոնց անդամներից մեկը կամ երկուսը լայն կիրառություն ունեն, իսկ մյուսն օգտագործվում է միայն որոշ կապակցություններում, ինչպես.

համանուններից մեկն ունի
լայն գործածություն.

ավար—պատերազմի ժամանակ
նակ թշնամուց խլված ղեկն, խավար»

տալ₂—հանձնել, դուրս տալ, երես տալ, ընթացք տալ, ժամանակ տալ, խոսք տալ, հաշիվ տալ, հոգի տալ, ֆամուս տալ և այլն:

Դաս—ուսումնառություն, դասաժամ, դաս առնել, դաս ստանալ, դաս ֆաղել և այլն:

Մատ—ձեռքի և ոտների մատները, մատը քափ տալ, մի մատ մեղր դառնալ, մատը քերանում մնալ, մատը կծել, մատը մատին շխփել, մատի փաթաթան, ճինգ մատի պես գիտենալ և այլն:

համանուններից մեկն օգտագործվում է միայն ճետեյալ արտահայտություններում և կապակցություններում.

«Մեկին ավար անել, մյուսին՝ խավար»

գույք

դուր—հյուանի գործիք

ծամ—մազերի հյուսք

բաս—հապա

բաս—թավ ձայն

աբար—գործողություն

հազարան—հազարավոր

հազարան—կոտրված գերանի «հազարան հավք»

տակ գրվող նեցուկ, սոնի

մատյան—գիրք

մատյան—էգ ձի

փուլ—երևույթի, պրոցեսի

զարգացման առանձին շրջան

փուլ—լուսնի հետզհետե

փոքրանալը՝ լրումից հետո:

«դուր գալ»

«մի ծամ ծամոն»

«մեկի ատամի ծամը լինել»

«բաս բոնել»

«բաս մտնել»

«արար աշխարհ»

«հազարան բլբուլ»

«հազարան հավք»

«մատյան գունդ»

(Սասանյան Պարսկաստանում

ընտիր հեծյալների գունդ)

փուլ—ավեր

«փուլ ածել»

«փուլ բերել»

«սիրտը փուլ գալ»

Ինչպես տեսանք, իմաստային կողմով հակադրվում են ժամանակակից հայերենի բոլոր համանուն բառերը: Լրացուցիչ որևէ հատկանիշով հակադրվում են համանուն բառերի մեծ մասը: Համանուն բառերը բառային հիմնական կազմում տարբեր տեղ են գրավում: Համանունական խմբի անդամները պատկանում են իմաստային տարբեր դաշտերի, այլ կերպ ասած՝ բառական տարբեր են թահամակարգերի և հակադրվում են՝ ա) հասարակագիտական սկզբունքով, բ) տերիտորիալ սկզբունքով, գ) ժամանակագրական սկզբունքով և դ) ոճական սկզբունքով, դարձվածքներ կազմելու հատկությամբ:

Ժամանակակից հայերենի համանուն բառերի գործառնությունը
խոսքի մեջ

«նոսք» անվան տակ ի նկատի ունենք տեքստը, այսինքն՝ որևէ հեղինակի կողմից դրված ասույթների ամբողջությունը:

Նախ կարևոր ենք համարում նշել, որ հաղորդակցումը այնպիսի մի ակտ է, որը ենթադրում է առնվազն երկու անձ, որոնցից մեկը արտահայտում է (ինչպես նաև դրում է), իսկ մյուսը՝ ընկալում (ինչպես նաև ընթերցում է): Նման դեպքերում հաշվի

ենք առնում երկու տիպի հարաբերություն՝ 1) արտահայտողի կողմից դեպի հաղորդակցության առարկան (նշանակությունը) և նրա կողմից գործածված համանուն բառը, 2) լսողի կողմից դեպի հաղորդակցման առարկան (իմաստ) և նրա կողմից ընկալված համանուն բառը, Հաղորդողի հիմնական նպատակը տվյալ մտքի կամ արտահայտության ճիշտ փոխանցումն է, իսկ լսողի (կամ կարդացողի) նպատակը՝ դրա ճիշտ ընկալումը, հետևապես և՛ առաջինի, և՛ երկրորդի համար առաջնային է բովանդակության պլանը, Սակայն այստեղ կա մի փոքրիկ շեղում. խոսքի ընթացքում համանունության խնդիրը խոսողի համար երկրորդ պլանում է, իսկ նա օգտագործում է որևէ բառ-համանուն, այդ պահին չի մտածում, որ տվյալ լեզվի համակարգում կա նաև այդ բառին համահնչուն մի այլ բառ, և լսողը կարող է շփոթել դրանք իրար հետ կամ սխալ հասկանալ ասույթի իմաստը, Ուրեմն՝ խոսողի կամ գրողի համար կարևոր է բառի ոչ թե հնչական, այլ իմաստային կողմը, իսկ լսողի կամ ընթերցողի համար՝ նաև բառի հնչական կողմը, արտահայտման միջոցներն ու եղանակները, իսկ միևնույն հնչունական կազմով այդ լեզվում կան երկու և ավելի տարրեր բառեր, լսողը կարող է երկմտել, թե այդ բառերից որն է նկատի ունի խոսողը:

Տարբեր իմաստ ունեցող բառերի իրացումը տեղի է ունենում կոնտեքստում: Սովորաբար «կոնտեքստ» անվան տակ ի նկատի են ունենում բառային շրջապատը, որը հնարավորություն է տալիս ճշտորեն որոշել տվյալ ասույթում գործածված բառերի իմաստները:

Համանուն բառերի տարբեր իմաստների բացահայտումը ավելի ակնառու կերպով երևան է գալիս բառային տարրեր շրջապատում: Այդ տեսակետից մեծ դեր է կատարում նաև տվյալ լեզվի համակարգը: Ինչպես ճիշտ կերպով նշել է Լ. Վայսգերբերը, համանուն բառերի իմաստները տեղադրվում են լեզվական համակարգում³⁶, իսկ հայերենի բառային համակարգում չլինելն չափաստական տոն» և «փոքր միջատ» իմաստները, ոչ մի կոնտեքստ չէր կարող ստեղծել զառիկ₁ և զառիկ₂ համանունները: Կամ եթե հայերենի բառական համակարգում չլինելն «հորեղբոր աղջիկ» և «պերճածաղիկ» իմաստները, կոնտեքստը չէր կարող ստեղծել զառմուխ₁ և զառմուխ₂ համանունները:

³⁶ L. Wetsgerber, Die vier Stufen in der Erforschung der Sprachen, Düsseldorf, 1963. էջ 68.

Համանուն բառերի բառական տարբեր իմաստների գործառութունը կոնտեքստում և կոնտեքստի գերը այդ իմաստների սահմանազատման խնդրում ավելի հաջող քննելու և լավ պատկերացնելու համար ներմուծենք իմաստային ցուցիչ տերմինը³⁷։ Այդպես են կոչվում կոնտեքստի այն բոլոր տարրերը, որոնք օգնում են բացահայտելու համանուն բառերի տարբեր իմաստները։

Հայերենի բառական համակարգում ունենք ֆուրդ₁—(ազգ) և ֆուրդ₂—(ծաղիկ) համանուն բառերը. «Շատ դարեր տանջեցին տաճիկ. պարսիկ, հույն և քուրդ» (ՀԹ) կոնտեքստում որպես իմաստային ցուցիչ կարող է ծառայել «տանջեցին» բայը։ Այդ բայը իր բառական իմաստով օգնում է ընթերցողին անմիջապես ընկալելու, որ տվյալ կոնտեքստում գործառված է ֆուրդ₁—(ազգ) բառը և ոչ թե ֆուրդ₂—(ծաղիկ)։ Իսկ «Քուրդը բուսել է վճիտ ջրերի ափին» (ՀԹ) կոնտեքստում «բուսել է» բայը հուշում է ընթերցողին, որ այդ կոնտեքստում գործառված է ֆուրդ₂ (ծաղիկ) և ոչ ֆուրդ₁ (ազգ) համանունը։ Ուրեմն, կարելի է ասել, որ առաջին օրինակի համար իմաստային ցուցիչ է ծառայում տանջեցին, իսկ երկրորդի համար՝ բուսել է բայը։

Որպես իմաստային ցուցիչներ կարող են ծառայել ոչ միայն բայերը, այլև ուրիշ բառեր։ Ամեն անգամ համանուն բառերի իմաստային ցուցիչը որոշելիս պետք է ելնել կոնկրետ կոնտեքստից։

Համանուն գոյականների համար որպես իմաստային ցուցիչ կարող են ծառայել գոյականները, ածականները, բայերը, թվականները։

Հայերենի բառային համակարգում ունենք փրփրուկ₁ (ձկան տեսակ) և փրփրուկ₂ (ծաղկի անուն) գոյականները։ Այս համանունները պատկանում են իմաստային տարբեր դաշտերի, քանի որ առաջինը մտնում է «կենդանիների անունների» մեջ, իսկ երկրորդը՝ «ծաղկի անունների»։ «Փրփրուկը Բարենցի ծովում մեծ քանակությամբ երևում է ամռան երկրորդ կեսին» (դասագիրք)։ «Պատշգամբներում ծաղկել են ծխածաղիկը, աղավնիճը, փրփրուկը, զինածաղիկը» (մամուլ)։ Փրփրուկ₂—(ծուկ) համանվան համար որպես իմաստային ցուցիչ կծառայեն «Բարենցի ծովում»

³⁷ Այս տերմինը փոխ ենք առնում՝ Ս. Н. Глоцкий, Лексическая омонимия имен существительных в современном немецком языке, автореферат, Киев, 1967, էջ 17։

կապակցութիւնը, իսկ փրփրով²—ի (ծաղիկ) համար՝ ծաղկել է բայը:

Բայը որպէս իմաստային ցուցիչ է ծառայում համանուն գոյականների համար, եթե վերջիններս նախադասութեան մեջ կատարում են ենթակայի կամ խնդրի շարահյուսական դեր, օրինակ՝ «Գիտե՛ս և մի ուրիշ դարման, որ կյանքը հարյուրավոր տարիներով երկարացնում է» (Բ) կոնտեքստում երկարացնում է բայը ցույց է տալիս, որ այստեղ գործառնած է դարման¹ (դեղամիջոց) բառը, իսկ «Հին դարմանը քամուն շեն տա» (ՊՊ) նախադասութեան մեջ քամուն շեն տա կապակցութեան շեն տա բայը իր իմաստով և խնդրով (քամուն) հուշում է դարման²—ի (հարդի) գործառնութեան մասին:

Հնդհանրապէս տարբեր համանունների համար բնորոշ է բառական տարբեր արժույթայնութիւն: Տարբեր գոյական-համանուններ կապակցվում են տարբեր ածականների հետ: Կարելի է ասել, որ ածականները և թվականները համանուն գոյականների համար իմաստային ցուցիչներ են ծառայում այն ժամանակ, երբ այդ ածականները և թվականները տվյալ գոյականի համար կատարում են որոշչի պաշտոն:

Պատահում են դեպքեր, երբ շատ դժվար է լինում որոշել համանուն բառերի իմաստային ցուցիչը: Այդպէս է լինում մեծ մասամբ այն դեպքերում, երբ համանուն բառերը պատկանում են միևնույն խոսքի մասերին: Հետևաբար ավելի հեշտ է տարբեր խոսքի մասերի պատկանող համանուն բառերի իմաստային ցուցիչների որոշումը:

«Ընկավ ծերուկ, քն Հեկառը, հանգավ լուսը քն հոգու» (ՀԹ) և «Նրա սխալներն ու թուլութիւնները նկատելով ու անցնելով, տեսնեմք, թե վերջիվերջո քնչի հանգավ, ինչ գտավ» (ՀԹ): Առաջին կոնտեքստում լուս գոյականը ծառայում է որպէս իմաստային բանալի հանգչել—(մարել) համանուն բայի համար: Մյուս կոնտեքստում նույն դերը կատարում է նա զեղչված դերանունը հանգել²—(եզրակացութեան գալ) բայ-համանվան համար: «Մի խումբ գինվորներ արշավում էին դեպի մեզ: Դրութիւնը նորից լրջանում էր» (ՎՎ) և «Պայծառ երեկոն ժպտում էր ու հետզհետեւ լրջանում» (ԴԴ) կոնտեքստում դրութիւն գոյականը ծառայում է որպէս իմաստային բանալի լրջանալ—լուրջ դառնալ, ժանրանալ համանուն բայի համար, իսկ մյուս կոնտեքստում երեկոն գոյա-

կանը՝ լրջանալ² (լուրթ գույն ստանալ, երկնագույն դառնալ) բայ—
համանվան համար:

Հայերենի բառային համակարգում ունենք փողային₁—«դրամական» և փողային₂—«փչող գործիքներով կատարվող» համանուն ածականները: Այս ածականները կոնկրետ խոսքային ակտում կապակցվում են տարբեր գոյականների հետ: Օրինակ. «Առևտրական կապիտալն իր գոյության համար պարզ ապրանքային և փողային շրջանառությունից բացի ոչինչ չի պահանջում» (դասագիրք) և «Փողային նվազախումբը կատարեց Սովետական Միության պետական հիմնը» (մամուլ) կոնտեքստներից առաջինում գործածված է Փ₁—«դրամական» համանունը, որի համար որպես իմաստային ցուցիչ է ծառայում նրան կապակցված «շրջանառությունից» գոյականը, իսկ Փ₂—(«փչող գործիքներով կատարվող») համանվան համար՝ նրան կապակցված «նվազախումբ» գոյականը: Բայց «Կովկասը ճանդիսանում էր միակ և ճավաստի կովանը Արևելքում...» (ՀԹ) և «Հայրս տանում էր ինձ ու դնում կովան գոմեշի մեջքին» (ՀՔ) կոնտեքստներում Կ₁—«հենարան» և Կ₂—«կովարար» համանունները տարբեր խոսքի մասերի պատկանող և իմաստով հեռու բառեր են: Կ₁ և Կ₂ համանուն բառերի և նրանց իմաստային ցուցիչների միջև գոյություն ունի շարահյուսական տարբեր հարաբերություն. այդ համանուն բառերը և նրանց իմաստային ցուցիչները նախադասության մեջ կատարում են տարբեր պաշտոններ: Կ₁—«հենարան» համանվան համար իմաստային ցուցիչներ են «միակ և հավաստի» ածականները, իսկ Կ₂ «կովարար» համանվան համար՝ «գոմեշ» գոյականը: Այս համանուն բառերի և նրանց իմաստային ցուցիչների միջև գոյություն ունի իմաստային համաձայնություն:

Տարբեր գոյական համանուններ կապակցվում են տարբեր գոյականների հետ: Օրինակ՝ «Գնացե՛ք Սև ծովի ափերը կամ Ղրիմ» (ՆԴ) և «Ձեռքերի ափերը խփեց իրար և բացականչեց ծայրաստիճան ապշած» (ՆԴ) կոնտեքստներում ափ₁—«գետ» և ափ₂—բառ-համանունները կապակցված են տարբեր գոյականների հետ: Այս բոլոր դեպքերում համանուն բառերի իմաստային ցուցիչներն օգնում են ավելի շուտ ընկալելու և ըմբռնելու խոսքի մեջ արտահայտած նրանց միանգամայն տարբեր շարունակային կապերը:

Պատահում է, որ ընթերցողը կամ լսողը չի ընկալում կամ սխալ է ընկալում բառ-համանվան իմաստը: Այդ մեծ մասամբ պատահում է այն դեպքերում, երբ համանուն բառերից մեկն օդ-

տագործվում է որպես միակազմ նախադասություն, այսինքն՝ երբ հատկանիշը և այն կրող առարկան տարբերակված ձևով չեն արտահայտվում ենթակայի և ստորոգյալի միջոցով. գեղարվեստական խոսքում՝ թե՛ արձակում և թե՛ չափածոյում, հանդիպում են համանուն բառով արտահայտված անվանական անդեմ նախադասություններ, ինչպես. «Փողեր» (ՎՇԼԱ): Միայն կոնտեքստից կամ նրան հաջորդող նախադասությունից կարելի է հասկանալ, որ այստեղ գործառված է ոչ թե Փ₁—խողովակ, Փ₂—դրամ, այլ՝ Փ₃—երաժշտական գործիք, համանունը. «Փողեր: Մտնում են՝ մեկը առջևից բերելով թագը, Լիբ արքան, Կոբնովը, Օլբենին...» (ՎՇԼԱ):

Երբեմն պատահում է, որ տարզ ընդարձակ նախադասության մեջ օգտագործված բառ-համանուն իմաստը ևս կասկածանք է հարուցում: Օրինակ՝ «Նա մտածում է լավ կադրեր ունենալ» (մամուլ) Նախադասության մեջ կադր բառը ստեղծում է մտքի երկդիմություն, քանի որ ժամանակակից հայերենի բառային համակարգում ունենք կադր₁ և կադր₂ համանունները: Միայն նախորդ և հաջորդ նախադասությունները կամ լրիվ տեքստը կարող են օգնել հասկանալու, որ տվյալ ասույթում խոսքը աշխատանքային թե կինոնկարի կադրերի մասին է:

Շատ հազվադեպ է պատահում, որ բարդ նախադասության մեջ գործառված բառ-համանունը մտքի երկդիմություն առաջացնի: Օրինակ. «Ահա ես քողդ ետ առի—որքան լույս ճառագայթեց դեմքիդ վրային՝ ակին մեջ» նախադասությունում պարզ չի արտահայտվում, թե որ բառ-համանունն է գործառվել: Միայն նախորդ նախադասությունից կարող ենք իմանալ, որ տվյալ նախադասության մեջ կիրառված է ոչ թե Ա₁—աչք, Ա₂—թանկագին քար, Ա₃—անիվ, այլ՝ Ա₄—աղբյուր համանունը. «Մալե-ծունկերդ դողդոջ և աղբյուրին վրա ծռե: Անա ես բողդ ետ առի՝ ուրբան լույս ճառագայթեց դեմքիդ վրային՝ ակին մեջ» (ԴՎ):

Հազվադեպ է պատահում, որ համանուն բառերի իմաստային ցուցիչը չլինի կոնտեքստում: Նման դեպքերում, երբ միևնույն բառային շրջապատում հանդես են գալիս երկու համանուն բառեր, ընթերցողը կարող է կասկածել, թե այդ համանուններից որն է գործառվում: Օրինակ՝ «Ճիշտն ասած, հոգուս խորքում ես ինձ անպարտ եմ գգում, բայց դրանով սիրտս չի թեթևանում, բնավ, քանի հիշում եմ կատարվածը» (ՄԶ) տեքստում անպարտ-ը կարելի է հասկանալ Ա₁—անպարտելի, Ա₂—անմեղ և Ա₃—անպարտք,

կամ «Եթե տերը հաջողություն կտա, ինչ մեծ բան է նրա վարելը» (Ր) տեքստում վարելը կարելի է հասկանալ Վ₁—քշել, առաջ շարժել, Վ₂—հերկել։ Միայն մեծ կոնտեքստը, նախորդ նախադասությունները կարող են լրացուցիչ տեղեկություններ տալ տվյալ համանուն բառի իմաստի մասին։

Հնարավոր է, որ գեղարվեստական ստեղծագործություններում միևնույն նախադասության մեջ գործառվեն երկու համանուն բառեր՝ որպես հեղինակի կողմից օգտագործվող ոճական հնարանք։ Այս երևույթը ավելի նկատելի է ռուսերենում. «Мир без оружия—мир без воѣны», «Замыта мира—дело всех народов мира»³⁸.

Այդպիսի հազվագեղ օրինակներ կարելի է գտնել հայ ժողովրդական առած-ասացվածքներում, ինչպես. «Ես աղա, դու աղա, մեր աղունն տ՛վ աղա»³⁹։ Սակայն մի շարք հայ հեղինակների ստեղծագործություններում մեզ չհաջողվեց գտնել այդպիսի գեթ մեկ օրինակ։

Եթե միևնույն ասույթներում կիրառվում են երկու համանուն բառեր, ապա կոնտեքստը դարձյալ հնարավորություն է տալիս որոշելու երկու բառերի իմաստները, իսկ եթե կիրառվում է մեկ համանունը և կարելի է հասկանալ «երկու իմաստները», այս դեպքում դժվար է որոշել, թե որ համանունն է կիրառվել։ Այս առումով հատկանշական են հատկապես այն դեպքերը, երբ համանուն բառերն օգտագործվում են բառախաղային արտահայտություններում և անեկդոտներում։ Նման տիպի բառախաղային արտահայտությունների և անեկդոտների հիմնական նպատակը համանուն բառերի միջոցով մտքի երկդիմություն ստեղծելն է։ Օրինակ՝ հետևյալ կոնտեքստում կիրառված է ֆայլ—շախմատի խաղում յուրաքանչյուր գործողություն իմաստը, բայց կարելի է հասկանալ նաև նրան համանուն ֆայլ—քայլափոխ բառը.

— Քանի՞ ֆայլ են կատարել։

— Մեկը ոչ մի ֆայլ չի կատարել, իսկ մյուսը՝ հարյուրից էլ ավել։

— Այդպիսի բան չի լինում։

— Ինչպե՞ս չի լինում, մեկը երկու ժամ է տեղից չի բարձրացել, մյուսն անընդհատ քայլում է բեմի վրա։ (ՇՀ, 1972, № 7, էջ 23)։

³⁸ «Правда», 13/X—1959, стр. 4.

³⁹ Ա. Ղաճաղեյան, Հայկական առածանի, Երևան, 1951, էջ 73։

Այս ամենից բխում է, որ նույն արտասանություն ունեցող բառական միավորների զանազան հատկանիշները և քերականական տարբեր կարգերի պատկանելն օգնում են սահմանազատելու նրանց բառական տարբեր իմաստները: Համահնչուն բառերի իմաստային տարբերություններն ավելի պարզ կերպով բացահայտվում են, երբ նրանք հանդես են դալիս տարբեր կիրառություններում: Հայերենում հազվադեպ է պատահում, որ համանուն զույգերը կամ եռյակները հանդես գան բառական միևնույն շրջապատում: Հետևապես, համանուն բառերը չեն խանգարում փոխըմբռնմանը: Բառական կոնտեքստից որոշվում է, թե համանուններից որն է գործառվել: Մեր կողմից քննված ավելի քան 900 նախադասություններում, որոնցից միայն մի քանիսը բերեցինք սույն աշխատանքում, համանուն բառերը փոխըմբռնման արգելք չեն դառնում:

Այսպիսով, վերը շարադրածից կարելի է անել մի քանի հզորակացություններ:

1) Համանուն բառերը համաժամանակյա լեզվական գործոններ են: Նրանց առկայությունը բառապաշարում բացատրվում է լեզվական համակարգով:

2) Բառային մակարդակում ճեշապես զուգադիպվող միավորները (բառույթները) կազմում են համանունական խմբեր, որոնց անդամների միջև գոյություն ունեն հակադրական հարաբերություններ: Այդ խմբերը լեզվական համակարգի միկրոսիստեմներ են:

3) Համանուն բառերը գործառվում են տարբեր կոնտեքստում և նրանց համար բնորոշ է բառական տարբեր արժույթայնություն: Համանուն բառերը գտնվում են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ և բացառում են խոսքում ստաջացող ոչ ճիշտ փոխըմբռնումը:

ՀԱՄԱՆՈՒՆ ԲԱՌԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՏԻՊԵՐԸ

Համանուն բառերի դասակարգումը կարելի է կատարել մի քանի սկզբունքով: Բայց ամեն դեպքում պետք է հաշվի առնել երկու կարևոր հանգամանք. ա) դասակարգման հիմքում պետք է դնել այնպիսի հատկանիշ, որ էական լինի համանուն բառերի համար, այսինքն՝ պետք է ճիշտ ընտրել դասակարգման հիմքում գրվող հատկանիշը, բ) ամեն դեպքում պետք է հենվել այն բանի

վրա, որ լեզուն համակարգ է և հաղորդակցական ֆունկցիա է կատարում: Քանի որ համանուն բառերի համար բնորոշ են արտասանության նույնությունը և իմաստի տարբերությունը, ապա դասակարգման ժամանակ ևս պետք է հավասարապես հաշվի առնել այս երկու հատկանիշները: Այդ հատկանիշների հիման վրա տարված դասակարգումը կլինի ճիշտ, քանի որ այն մեզ հնարավորություն կտա առավել ճիշտ որոշել համանուն բառերի խոսքի մասային և գործառության յուրահատկությունները, նրանց ձևական, ձևաբանական, իմաստային և շարահյուսական հատկանիշները:

Համանունների դասակարգումը կատարելիս նշանակալից շահով հենվել ենք Ա. Ի. Սմիռնիցկու դասակարգման սկզբունքների վրա⁴⁰, Սակայն հաշվի առնելով հայերենի համանուն բառերի բնույթն ու առանձնահատկությունները, որոշ շահով շեղվել ենք նրա սկզբունքներից:

1) Ըստ իմաստային հակադրության բնույթի համանուն բառերը կարելի է ստորաբաժանել հետևյալ խմբերի.

ա) բառական նամանուններ. այսպես են կոչվում այն համանուն բառերը, որոնք հակադրվում են միայն բառական իմաստներով, այդ բառերը պատկանում են միևնույն քերականական կարգին, նույնական են իրենց քերականական բոլոր ձևերում, ինչպես. մորթ—մորթի, կաշի, մորթ—մորթելը, մորթելու գործողությունը, ճուլզ—բույսերի մեջ գտնվող մածուցիկ նյութ, ճուլզ—ծվանք, հուզմունք, ճղճիմ¹—կանգնած, լճացած, ճղճիմ²—փոքրոգի, կետ¹—(կենդանի) վիշապաձուկ, կետ²—տեղ, նըշան, կետ³—հարց, «Մհեր լախտը քաշեց, ճեղքեց գանգը վագրի ահոիկ, Միսը կերավ, մորթը գցեց» (ԱԻ): «Կատարվել է հարկադիր մորթ և կենդանի վաճառք» (մամուլ): «Եվ ճուլզ ծաղկանց փրփրագեղ մատովակի քաղցր օշարակ» (ՄՊ): «Մեկն էլ այն է հոգու անխիվ տենչերի, որ իմ աչքով տեսնեմ ճուլզը ջրերի» (ՀԹ): «Տիգրանը մանր, եսասեր երիտասարդ չէ, որ անձնական ճղճիմ խժթանքներով զբաղվի» (ՀԹ): «Այնտեղ մեր շուրջը ծփում է դեռ ճղճիմ ճահիճը ծանրանիստ» (ԵԶ): «Նորածին կետի քաշը լինում է 1—2 տոննա և կրկնապատկվում է ծնվելուց հինգ օր հետո» (մամուլ): «Իվան Բեյլը... գլուխը կախում էր կրծքին, աչքերը կի-

⁴⁰ Некоторые замечания об английской омонимике, «Иностранные языки в школе», 1948, № 5.

սախտութիւն անում և ակնապիշ նայում մի կետի» (ԱՔ)։ «Վերջին կե-
տի վերաբերմամբ դեռ մնում էր նրանց համաձայնություն կա-
յացնել» (մամուլ)։

Ընդգծված համահնչուն բառերը միևնույն քերականական ար-
ժեքն ունեցող բառեր են և հակադրված են միայն իրենց արտա-
հայտած բառական տարբեր իմաստներով։

բ) Բառափեռականական համանուններ. բառաքերականական
համանուններն այն բառերն են, որոնք տարբերվում են և՛ բառա-
կան, և՛ քերականական իմաստներով։ Բառաքերականական հա-
մանունական խմբերի միավորները քերականական տարբեր ար-
ժեք ունեցող միավորներ են, որոնք միանման են հնչում միայն
քերականական որոշ ձևերում, ինչպես, համասփյուռ—բույսի ա-
նուն, համասփյուռ—ամեն կողմ սփռված, անաբաբ—անպատվել,
անաբաբ—առանց արգելքի, սուր—թուր, սուր—հատու, «Համաս-
փյուռ ծաղիկ, որ ծաղկեր քուարևուդ նման» (ԽԴ)։ «Համասփյուռ
կանաչ էր՝ ուրախություն և զարթոնք» (ՍԽ)։ «Ես չեմ կարող ա-
նաբաբ իմ առաջին մաքուր սիրո հիշատակը» (ՆԴ)։ «Բազմու-
թյունն անաբաբ հասավ Վասակի ապարանքին» (ԴԴ)։ «Ով սուր է
հանում, սրից էլ կընկնի» (ասացվածք)։ «Իմ սուր, արթուն ա-
կանջում մի խոր ձեն է միշտ հնչում» (ՀԹ)։

Բառաքերականական համանունները ճիշտ պատկերացնելու
համար անհրաժեշտ է համեմատել բառական և քերականական հա-
մանունները, ցույց տալ դրանց միջև եղած տարբերությունները,
քանի որ բառաքերականական համանուններն ունեն բառական և
քերականական համանունների բնորոշ հատկանիշները⁴¹։ Օրինակ՝
գիր գոյականը տրական հոլովում ունենում է գրի ձևը, որը հնչա-
պես զուգադիպում է գրել բայի ըղծական եղանակի ապառնի ժա-
մանակի եզակի թվի երրորդ դեմքի բայաձևին՝ գրի։ Այստեղ ու-
նենք փեռականական համանուններ։

Քերականական համանունությունը տարբերվում է բառակա-
նից նաև նրանով, որ քերականական համանունություն կազմում
են ոչ միայն բառական միավորները, այլ նաև տարբեր ձևային
ներքին Դրանք այն համաձայնություններն են, որոնք ունեն նույն հնչու-
նական զմը, բայց արտահայտում են տարբեր քերականական ի-

⁴¹ Քերականական համանունների մասին խոսվում է միայն դրանք բառաքերա-
կանական համանուններին հակադրելու համար. քերականական համանունների ու-
սումնասիրությունը սույն աշխատության նպատակներից դուրս է։

մաստննր: Հնարավոր է, որ համաձեռնությունների մեկ խմբում լինեն և՛ բառակազմական, և՛ ձևակազմական ձևություններ:

Հաճախում կան ձևություններ, որոնք արտահայտում են քերականական իմաստ. դրանք սովորաբար կոչվում են երկրորդական ձևություններ: Այդ ձևություններից մի քանիսը կոնկրետացնում են բառերի իմաստները և հիմնական ձևություններից կազմում են նոր բառեր, ուստի դրանք կոչվում են բառակազմական ձևություններ: Մի քանիսն էլ ջուլջ են տալիս բառերի հարաբերությունը խոսքի մեջ և անվանվում են բառահարաբերական ձևություններ: Օրինակ՝ ի բառակազմական ձևությամբ կազմում է ածականներ (մոլի, կատաղի, հարգի, վայրի), դոյականներ (երկուշաբթի, հինգշաբթի) և դերանուններ (նույնպիսի, որպիսի): Իսկ ի բառահարաբերական ձևությամբ սեռական-տրական հոլովման վերջավորությունն է (ֆաղափի աղմուկը, մեֆեմաների սուլոցը): Ի բառակազմականի և ի բառահարաբերական ձևությունները քերականական համանուններ են:

Ե՛վ բառական, և՛ բառաքերականական համանունների համար բնորոշ է այն, որ երկուսն էլ կազմում են համանուն բառեր, այն տարբերությամբ սակայն, որ բառաքերականական համանունները հակադրվում են նաև քերականական տարբեր իմաստներով: Ուրեմն, կարելի է ասել, որ բառական և բառաքերականական համանունության հիմնական տարբերիչ հատկանիշն արտահայտվում է արտասանությամբ զուգահեռվող բառական միավորների քերականական իմաստների նույնականությամբ և տարբերությամբ:

գ) Խառը համանուններ. ժամանակակից հայերենի համանուն բառերի շարքում առանձնանում է նաև բառերի մի երրորդ խումբ, որը կարելի է կոչել խառը համանուններ: Նման բառերով կազմված համանունական խմբերի բաղադրիչները երկուսից ավելի են: Նրանց կազմում կան և՛ բառական, և՛ բառաքերականական համանուններ: Այսինքն՝ համանունական խմբի երկու անդամները քերականորեն նույնական են և հակադրվում են միայն բառական տարբեր իմաստներով, իսկ երրորդ անդամը (քիչ դեպքերում նաև չորրորդ) հակադրվում է առաջին և երկրորդ անդամներին և՛ բառական, և՛ քերականական իմաստով: Նման համանուններից են, օրինակ, աղի—աղը շատ, աղի₂—նվազարանի լար, աղի₃—աղիք, բուն₁—արմատ, ծառաբուն, բուն₂—բուն, բուն₃—հիմնական, էական, կապ₁—թուկ, կապիչ, կապ₂—(քերականական) խոսքի մասերից մեկը, կապ₃—կապված, փակ. և այլքերը գոռալով դիպչում

էին ափի ժայռին ու փշրվում՝ շորս կողմը զարկելով աղի ջրի փրփրուն ցայտերը» (ՀԹ)։ «Ես ուզեցի քնարով մի... սիրող էակ ճանաչել զանի, ըստ իմ քմաց լարել աղի» (ՊԴ)։ «Ստամոքսի մեջ ընկած սուր օտար մարմինը կարող է ծակել ստամոքսի կամ աղիի պատը» (մամուլ)։ «Այստեղից մի ծառի բունը հեռու էր մյուսից հինգ կամ տասը քայլով» (մամուլ)։ «Ոնց՞ թե, երկիրը իր ժողովրդով ծախի բուն է, որ թրովդ վերցնես տաս» (ԴԴ)։ «Լեռներ հասկացավ Արուսի ծնողների այդ հանկարծական փոփոխության բուն պատճառը» (ՆՁ)։ «Դուք չեք իմանում, եթե դա կապը կտրելու լինի, ինչպես կփախչի» (Բ)։ «Կապը և կապի հետ դրվող բառը նախադասության մեկ անդամ են և պատասխանում են մեկ հարցի» (դասագիրք)։ «Ստույգ են գրել, թե մեր լեզուները կապ են, մենք դատապարտված ենք մշտնջենավոր համրության» (Բ)։

2) Ըստ արտասանության, այսինքն՝ ըստ այն բանի, թե համանունական խմբի անդամները միատեսակ են հնչում քերականական բոլոր ձևերում, թե՞ միայն մեկ առանձին ձևում, այսինքն՝ ըստ արտասանության զուգադիպվող միավորների համանուն բառերը կարելի է բաժանել երկու խմբի.

ա) լրիվ համաճեմներ. սրանք այն համանուն բառերն են, որոնք միատեսակ են արտասանվում իրենց քերականական բոլոր (եկականային և հարացուցային) ձևերում, ինչպես. խաբաճ—խաբանելու գործիք, խաբաճ—բույսի անուն. խլուրդ—կենդանի, խլուրդ—խոտաբույս, կռաբաժվել—ջարդոտվել, կռաբաժվել—սեթևեթել։

բ) Մասնակի համաճեմներ. սրանք այն համանուն բառերն են, որոնք արտասանությամբ զուգադիպում են միայն առանձին ձևերում, ինչպես. կուռ—բազուկ, կուռ—պինդ, ամուր, թափ—հզորություն, ուժ, թափ—խորքը, ներսը, նվազ—նվազածություն, նվազ—անգամ։

«Կշարդեն նրանք թշնամուն անարգ, Դավթի կուռը քաջ՝ իմ ընկերներին» (ԳՍ)։ «Հեծան իրենց նժույգները, կուռ կապեցին զենք ու զրահ» (Տ)։ «Պետք է լայն թափ հաղորդել սկսած սոցիալիստական մրցությանը» (մամուլ)։ «Բայց թե քո աչքերը հոգու խորքերը թափ անցանիս, դու կտեսնես, թե ինչ զգացմունքներ այնտեղ բորբոքված, կուտակված էին» (ՀՀ)։ «Ու թնդում են մեծ սրահում երգ ու նվազ ներդաշնակ» (ՀԹ)։ «Աշխենն առաջին նվազ շճանաչեց նրան» (ՆԴ)։

Մասնակի համանունների (ինչպես նաև բառաքերականական համանունների) մեջ են մտնում նաև այն բառերը, որոնց համահնչունությունը պայմանավորված է բառերի թեքմամբ՝ հոլովովող և խոնարհվող բառի կրած փոփոխությամբ, այսինքն՝ հարացուցային ձևերով, ինչպես նաև բառակազմությամբ, ինչպես՝ արի₁—քաջ, անվախ, արի₂—գալ բայի եզակի հրամայականը (որն օգտագործվում է եկ ձևին զուգահեռ, գրաբարում յառնել բայի հրամայականը), անցավ₁—ցավ, վիշտ շունեցող, (ան-ցավ), անցավ₂—անցնել բայի անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքը, անցան₁—չցանված (ան-ցան), անցան₂—անցնել բայի անցյալ կատարյալի հոգնակի երրորդ դեմքը, կեր₁—ուտելիք, կեր₂—ուտել բայի եզակի հրամայականը, կար₁—կարվածք, կար₂—կամ պակասավոր բայի սահմանական եղանակի անկատար անցյալի եզակի երրորդ դեմքը, հոր₁—փորվածք, հոր₂—հայր բառի տրական հոլովը, Բեկի վեր, սարն ի վեր, ով արի զինվոր» (ՀՀ)։ «Արի՛, արի՛, ինձ մոտեցի՛ր» (Շ)։ «Արի՛, թո՛ւր գնանք ինձ հետ անցավ, անհոդ, անհուշ, անհետ» (ՀԹ)։ «Անցավ գնաց, էլ հետ չի գա նա նորից» (ԱԱՀ)։ «Ամառ, ձմեռ, ողջ տարիներ մշակն անբան, դաշտերն անցան» (ՀԹ)։ «Նրա բոլոր առաջարկությունները քվեարկվեցին կես առ կես և անցան միաձայն» (ՄԽ)։ «Ժամհարը... գնում էր փողոցի միջով շահմարձակվելով բարի գյուղացու դուռը բացելու և յուր փորին մի փոքր կեր տալու» (Բ)։ «Ես տանիքից մի կտոր կուտեմ, դու էլ լուսամուտից կեր, Գրետել» (ՀԹ)։ «Նրանցից ոմանք զարմացած նայում էին նրա սպիտակ շապիկին՝ եզերքը կարմիր կար» (ԱԲ)։ «Քանի լուսեղեն քո հերը դեռ կար, ես շատ եմ էնտեղ որսի միս կերել» (ՀԹ)։ «Մեզանում մի նավթի հոր փորելու վրա հարյուր հազարներ են ծախսվում» (ՀԹ)։ «Ամփոփելով հոր մարմինը իր անշուք գերեզմանի մեջ, երիտասարդը շարունակեց իր ճանապարհը» (Բ)։

3) Ըստ իրենց ծագման համանուն բառերը կարող են լինել՝ ա) համարմատ (հոմոգեն), բ) տարարմատ (հետերոգեն)։ Համարմատ են այն համանուն բառերը, որոնք ծագում են միևնույն արմատից, ինչպես՝ դաս₁—ուսումնառություն, դասաժամ, դաս₂—դասակարգ, խավ, ծածան₁—ծածանվող, ծածան₂—ձկան տեսակ, ծիրանի₁—բոսոր, ծիրանի₂—ծիրանենի։

Տարարմատ են այն համանուն բառերը, որոնք առաջացել են միանգամայն տարբեր արմատներից, ինչպես՝ մարտ₁—ճակատամարտ, կռիվ, մարտ₂—մարտ ամիսը, այր₁—քարանձավ, այր₂—տղամարդ, ամուսին, սեր₁—զգացմունք, սեր₂—կաթի սեր։

Այժմ տեսնենք, թե վերոհիշյալ սկզբունքներով դասակարգված համանուն բառերը ինչ համապատասխանություն և ընդհանրություն ունեն միմյանց նկատմամբ, այսինքն՝ ինչ հարաբերակցություններ կան այս երեք տարբեր դասակարգումների միջև: Բերված օրինակները և դրանց պարզ համեմատությունը ցույց են տալիս, որ առաջին և երկրորդ դասակարգումները զուգադիպում են, իսկ երրորդը միանգամայն անկախ դասակարգում է. դիտենք դրանց հարաբերությունը համանուն բառերի դասակարգումը պատկերող աղյուսակում: Համապատասխան հատկանիշը ունենալու դեպքում նշենք $+$ (պլյուս) նշանը, չունենալու դեպքում՝ $-$ (մինուս) նշանը, իսկ եթե եռանդամներից մեկը ունի, երկուսը չունեն կամ հակառակը $\pm$ (պլյուս-մինուս) նշանները:

Համանուն բառերի դասակարգումը

Ըստ իմաստի	Ըստ արտասանության զուգադիպող միավորների քանակի		Ըստ ծագման	
	լրիվ	մասնակի	համարմատ	տարարմատ
Բառական համանուններ	$+$	$-$	$\pm$	$\pm$
Բառաքերականական համանուններ	$-$	$+$	$\pm$	$\pm$
Բառական և բառաքերականական կամ խառը համանուններ	$-$	$+$	$-$	$+$

Ինչպես երևում է աղյուսակից, հայերենում բառական համանունները հիմնականում լրիվ են (պայմանականորեն ընդունում ենք, որ չթեքվող խոսքի մասերը ևս լրիվ են), մասնակի համանունները շատ քիչ են (տե՛ս էջ 75): Բառական համանունները կարող են լինել և՛ համարմատ, և՛ տարարմատ:

Բառաքերականական համանունները միայն մասնակի են (լրիվ լինել չեն կարող), դրանք ևս կարող են լինել և՛ համարմատ, և՛ տարարմատ:

Խառը համանունները մասնակի են, և ըստ ծագման հիմնականում տարարմատ են (քանի որ համարմատ խառը համանուններ հազվադեպ են պատահում, ուստի դրանք կարելի է հաշվի չառնել):

Համանունների այս տեսակները բացարձակ և անփոփոխ չեն: Համանունական խմբի անդամներից մեկը ժամանակի ընթացքում կարող է մտնել այլ տիպի մեջ, որոշ անդամներ կարող են ընդհանրապես դուրս գալ համանունական խմբերից կամ կազմել նոր խմբեր: Բացի այդ, ժամանակակից հայերենում կան մի քանի համանուն բառեր, որոնք հանդես են գալիս խոսքի մասերի ոչ հստակ սահմանազատումով կամ կրկնակի խոսքի մասային պատկանելությամբ: Օրինակ՝ աղօտ—թույլ, սակավալույս և աղօժ—աղախառն, համանուն բառերից առաջինը և՛ ածական է, և՛ մակբայ: Ածական համարելու դեպքում համանունական այդ խումբը պետք է համարել բառական համանուններ, իսկ մակբայ համարելու դեպքում՝ բառաքերականական համանուններ: Նման բառերի խոսքի մասային պատկանելությունը որոշելը դժվար է լինում մանավանդ այն դեպքում, երբ նրանք ձևավորված չեն տվյալ խոսքի մասին հատուկ բառակազմական միջոցներով: Օրինակ՝ ճամբար—չխոսկան, լալ, լուռ և ճամբար—դանդաղ, ծանր: Համանուն բառերից առաջինն ունի և՛ գոյականի, և՛ ածականի իմաստ, իսկ երկրորդը և՛ ածականի, և՛ մակբայի: Այս բառերը տարբեր խոսքի մասերի ոլորտներում կատարում են շարահյուսական տարբեր պաշտոններ, քանի որ շարահյուսական մակարդակում հանդես են գալիս իբրև տարբեր խոսքի մասերի պատկանող բառեր: Նման բոլոր դեպքերում հաշվի ենք առել ժամանակակից հայերենում տվյալ բառի որևէ խոսքի մասային պատկանելության առավել տարածվածության աստիճանը և ըստ այնմ ներառել համապատասխան համանունական խմբերում:

Այժմ անդրադառնանք համանունական խմբերի կոնկրետ տիպերին և ենթատիպերին:

ԲԱՌԱԿԱՆ ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐ

Ժամանակակից հայերենում համանունական խմբեր են կազմավորում բոլոր խոսքի մասերին պատկանող բառերից և որոշ բառաձևերից, իսկ բառական համանունական խմբեր են կազմավորում ոչ բոլոր խոսքի մասերից: Նյութական իմաստ ունեցող բառերից

մեծ քանակությամբ համանունական խմբեր են կազմում գոյականները, բայերը և ածականները: Դերանուններից և թվականներից բառական համանուններ չեն կազմվում: Մակբայներից կազմվում են ընդամենը մի քանի խումբ: Դրանք մակբայակերտ ածանցներով կազմված մակբայներ են, ինչպես՝ համբուս₁—համբուս₂, համբուս₂—դանդաղորեն. «Համբուսն զարթնում են հուշերն անցյալի...», «Ինչ քարմ էին, ինչ լավն էին վարդեր...» (1): «Եզները անտրամադիր խիստ համբուսն փաշում էին կամերը» (ԱԻ): Նման մակբայներից են նաև համբարար₁—դանդաղորեն, համբարար₂—համբ կերպով:

Քերականական (կապ, շաղկապ) և վերաբերմունքի իմաստ ունեցող (ծայնարկություն, եղանակավորող բառ) բառերից կազմված բառական համանուններ չկան: Պատահում են բնածայնական բառերից կազմված հազվագեղ օրինակներ, ինչպես՝ վուվու—տատրակի, աղունիկի հանած ձայնը, վուվու₂—(մանկական) քաղցրավենիք կամ խաղալիք, ծիկ₁—ասվում է հավերժ կանչելիս, ծիկ₂—ասվում է երեխայի հետ խաղալիս:

Ինչպես ասացինք, բառական համանունների բնորոշ հատկանիշն այն է, որ նրանք զուգադիպում են ոչ միայն բառարանային, այլ նաև հարացուցային ձևերում:

Գոյականական համանունական խմբեր

Ժամանակակից հայոց լեզվի բառային համակարգում բավական շատ են այն գոյականները, որոնք, արտաքին հնչյունականով լինելով նույնը, արտահայտում են տարբեր առարկա կամ իբրև ալոպիսին մտածված երևույթ:

Բառական համանունական խմբեր են կազմվում միայն հասարակ գոյականներից: Հատուկ և հասարակ գոյականներից համանուններ չեն կազմվում, թեև իրականում ալոպիսի համահնչյուն բառերը շատ են բոլոր լեզուներում⁴²: Որոշ լեզվաբաններ նման բառերը համարում են բառական համանուններ և հասարակ անուններից առաջացած հատուկ անունները համարում են համանունների առաջացման շղթայուններից մեկը:

Հայերենում, ինչպես նաև այլ լեզուներում, կան շատ անձնանուններ և տեղանուններ, որոնք առաջացել են հասարակ գոյա-

⁴² Այստեղ համեմուն բառը զործածում ենք լեզվաբանական տերմինի իմաստով, որը բխում է վերը տրված մեր ռազմանումից:

կաններից և ածականներից՝ գործածվելով որպես եզակի առարկայի անուններ, ինչպես՝ Ազատ, Քնքույշ, Գեղեցիկ, Նազանի, Խոնարհ, Լուսերես, Համեստ, Թագուհի, Մեխակ, Համբարձում, Թառլան, Աղավնի, Արծվիկ, Եզնիկ, Հրաշյա, Խաչատուր, Աստղիկ, Գոհար, Մաղկածուր, Գետակ, Յամաթաբերդ, Ազատաշեն, Գետածուր, Սարահարթ և այլն։ Սակայն այս բառերը և դրանց համահնչուն հասարակ գոյականները և ածականները բառական համանուններ չենք դիտում, քանի որ առաջինների բառային իմաստները չեն բացատրվում և ուրիշ լեզուներով չեն թարգմանվում։

Հասարակ գոյականները անվանում են առարկայի տեսակը։ Տվյալ բառով անվանված հասարակ գոյականը իր մեջ ներառում է նման տիպի առարկաների ընդհանուր հատկանիշը։ Իսկ հատուկ անունները այս հատկությունը չունեն։ Նրանք միայն տրվում են առանձին անձերի, տեղանունների և այլն, սոսկ պայմանական անվանումներ են և երբեք չեն դառնում տեսակի անուն։ Քիչ որ հատուկ անունների առաջին հատկությունն այն է, որ հարաբերելով առարկաների դասերին՝ սրանք ունենում են սոսկ անվանելու նշանակություն միայն, հատուկ անունները ոչ մի հասկացություն չեն արտահայտում⁴³։ Սակայն զարմանալի է, որ այս տողերի հեղինակը, խոսելով համանուն բառերի մասին, իբրև այդպիսին է դիտում նաև այն համահնչուն բառերը, որոնցից մեկը անձնանուն է, մյուսը՝ հասարակ գոյական, պատճառաբանելով, որ դրանք տարբեր բառեր են։ Վարժում եմ, որ նաև հնչունական զուգադիպությունները կամ նույնիսկ հատուկ և հասարակ գոյականների ծագումնաբանորեն կապված դեպքերը՝ տարբեր բառերի օրինակներ են⁴⁴։ Եվ իբրև օրինակ բերում է *груша*—Груша, лев—Лев, вера, надежда, любовь—Вера, Надежда, Любовь համահնչուն միավորները։

Նման կարծիք արտահայտվել է նաև հայ քերականության մեջ։ Մ. Ասատրյանը «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր» աշխատության մեջ խոսելով հասարակ անուններից հատուկ անունների առաջացման մասին գրում է. «Այս ձևով առաջացել և առաջանում են բազմաթիվ համանուններ (ընդգծումը մերն է—Ռ. Շ.), օրինակ՝ ծաղիկ—Մաղիկ, մանիշակ—Մանիշակ, շուշան—Շուշան, մարտիկ—Մարտիկ, նվեր—Նվեր, ավագ—Ավագ,

⁴³ А. А. Реформатский, Введение в языкознание, М., 1955, стр. 36.

⁴⁴ Лексикографический сборник, вып. IV, М., 1960, стр. 94.

ավետիֆ—Ավետիֆ, գյուտ—Գյուտ, թռնիկ—Թռնիկ, իշխան—Իշխան, հարություն—Հարություն, մանուկ—Մանուկ, գալուստ—Գալուստ, գետափ—Գետափ, ավան—Ավան և այլն, և այլն»⁴⁵։ Գուցե այս տողերի հեղինակը համանուն տերմինը գործածել է համահնչունության իմաստով, բայց այդ դեպքում լեզվաբանական տերմինը պետք է կիրառվեր իր իսկական իմաստով։

Սակայն այս հատուկ անունները և դրանց համապատասխան հասարակ գոյականները (այլ օրինակներում նաև ածականները) բառական և բառաքերականական համանուններ համարվել չեն կարող, քանի որ երկրորդները սոսկ պայմանական անվանումներ են և իրականում չեն անվանում հասկացությունները։ Բոլոր նման դեպքերում հատուկ անունը կորցնում է իր բառային ընդհանրական իմաստը, իսկ առանց այդ ընդհանրական իմաստի բառական համանուններ չեն կարող լինել։

Որոշ լեզվաբաններ էլ համանուն բառերի համար անհրաժեշտ համարելով գրության նույնությունը, միատեսակ արտասանվող շատ ածականներ և հատուկ գոյականներ համանուն չեն համարում լոկ այն պատճառով, որ վերջիններս գրությամբ տարբերվում են (քանի որ հատուկ անունները գրվում են մեծատառով)⁴⁶։ Այս մեկնաբանությամբ ևս անտեսվում է բառի իմաստը։

Համանուն գոյականները և թվի ու հոլովման ֆեռականական կարգերը

Քանի որ համանուն գոյականներն արտասանությամբ հիմնականում զուգադիպում են իրենց քերականական նույնական բոլոր ձևերում, ապա անհրաժեշտ է առանձնացնել այն համանուն բառերը, որոնք եզակի և հոգնակի թվերում, ինչպես նաև հոլովական որոշ ձևերում, ստանում են քերականական տարբեր ձևեր։ Այդ բառերը արտասանությամբ տարբերվում են քերականական միևնույն ձևերում, հետևապես կարելի է ասել, որ դրանք բառական կամ լրիվ համանունների շարքում հանդես եկող մասնակի համանուններ են։

⁴⁵ Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Երևան, 1970, էջ 113։

⁴⁶ М. Х. Ахтямов, Проблемы омонимии в современном башкирском литературном языке, автореферат канд. диссертации, М., 1966, стр. 4.

Համանուն գոյականների թիվը

Համանուն բառերը, արտասանությամբ և հնչյունակազմով լինելով նույնը, ստանում են միևնույն հոգնակերտ մասնիկները:

Ընդհանրապես համանուն գոյականների շարքում կան շատ բառեր, որոնց հոգնակի թվի կազմության համար կարևոր նշանակություն ունի բառի իմաստային կողմը: Այդպիսի մի շարք համանունական խմբերի անդամները գործածվում են միայն եզակի թվով: Այդ բառերի հոգնակին կա՛մ ընդունված չէ, կա՛մ գործածվում է հազվադեպ:

Ըստ քերականական թվի դրսևորման գոյականներից կազմված համանունական շարքերը կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

ա) համանուն գոյականներ, որոնք ունեն և՛ եզակի, և՛ հոգնակի թիվ:

բ) համանուն գոյականներ, որոնք ունեն միայն եզակի թիվ և հոգնակի թվով սովորաբար չեն գործածվում:

դ) համանուն գոյականներ, որոնցից մեկը ունի և՛ եզակի, և՛ հոգնակի թիվ, իսկ մյուսը գործածվում է միայն եզակի ձևով:

Քանի որ առաջին խմբի գոյականները բնորոշ և օրինաչափ են հայերենի համար, ուստի հարկ չկա դրանց մասին խոսել: II խմբի բառերը հիմնականում կազմված են —ույթուն գոյականներտ ածանցով և արտահայտում են հատկանիշի իմաստ: Այդ բառերից մի քանիսն ունի նաև հավաքական իմաստ, ինչպես՝ աղոտություն₁—աղոտ լինել, աղոտություն₂—աղախառն լինելը, համբություն₁—համբ լինելը, համբություն₂—դանդաղաշարժություն, եղկություն₁—զաղչություն, եղկություն₂—թշվառություն, հասարակություն₁—պարզություն, հասարակություն₂—հանրություն:

Այս խմբին պատկանում են նաև այն համանուն բառերը, որոնք գործողության, հիվանդության, նյութերի անվանումներ են, ինչպես՝ սլաշտում₁—պաշտելը, սլաշտում₂—(եկեղ.) պատարագից հետո տված ճաշ, բուր₁—քիմիական նյութ, բուր₂—հիվանդության անուն և այլն:

III խմբին պատկանող բառերն ավելի քիչ են, դրանք այն համանունական զույգերն են, որոնց անդամների մի եզրն իր արտահայտած իմաստի թեկադրմամբ գործածվում է միայն եզակի, ինչպես՝ ատլաս₁—մետաքսե փայլուն կտոր, ատլաս₂—քարտեզագիրք, արոս₁—արոսների, արոս₂—թռչուն, արոս₃—խոպանացված

արտ, կորդ, բուռ₁—դաշ, կիր, բուռ₂—ափ, տակա₁—«չափի և պատ-
շաճութեան զգացում խոսելու և շարժումների մեջ», տակա₂—երա-
ժըշտութեան և տաղաչափութեան մեջ ժամանակի միավոր և
այլն:

Անեզական գոյականներից համանուններ չեն կազմվում, կա
միայն երկու համանունական խումբ, որոնց անդամներից մեկը
ավելի շատ գործածվում է հոգնակի թվով. խազար₁—ցեղի անվա-
նում, խազար₂—ձիածոթրին բույսը, «Ելնում է անա ճգո՞ր Սլեզը
խենթ խազարներից վրեժ առնելու» (ՀԹ), Խոիկ₁—ջրաբնակ կեն-
դանինների շնչառության օրգանը, խոիկ₂—հիվանդության անուն,
«Ձկան խոիկները պետք է ունենան վառ կարմիր գույն» (դասա-
գիրք):

Համանուն գոյականների ճշգրտումը

Հոլովումը գոյականի ձևաբանական բնորոշ առանձնահատ-
կություններից է: Դրա միջոցով գոյականները կրում են ձևական
փոփոխություններ, որով էլ դրսևորում են իմաստային տարբեր
հարաբերություններ: Հոլովման դեպքում հարացուցային յուրա-
քանչյուր ձև արտահայտում է քերականական որոշակի իմաստ,
ուստի հոլովումը բառերի հարաբերությունն արտահայտող լեզվա-
կան կարևոր միջոց է:

Ինչպես գտնում է պրոֆ. Ա. Աբրահամյանը, գրաբարում հա-
մանուն գոյականները տարբերվում են իրենց հոլովական ձևե-
րով⁴⁷, հետևապես դրանք լրիվ համանուններ չեն, ինչպես, օրի-
նակ՝

գայլ₁—(գազան) գայլոյ, գայլով
գայլ₂—(բերանակապ) գայլի, գայլիւ
դար₁—(ժամանակ) գարու, գարուց
դար₂—(բարձունք) դարի, դարիւ
ճայր₁—(ծնող) հաւր, հարբ, հարամբ
ճայր₂—(մարդապետ) հորի, հորիւ
փռդ₁—(խողովակ) փողոյ, փողով
փռդ₂—(կոկորդ) փողի, փողիւ

Քննարկվող հարցի տեսանկյունից հետաքրքրական է հետև-
յալ փաստը. ժամանակակից հայերենում գոյականներից կազմը-

⁴⁷ Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1958, էջ 63:

ված համանունական խմբերի անդամները մեծ մասամբ պատկանում են միևնույն հոլովումներին, ինչպես մառա₁ (ամիս)—մարտի, մառա₂ (ճակատամարտ)—մարտի, փռ₁ (դրամ)—փռ₂ (խողովակ)—փռ₃ (տեր)—իշխանի, իշխան₂ (ծուկ)—իշխանի, դարման₁ (դեղ, դեղամիջոց)—դարմանի, դարման₂ (հարդ)—դարմանի, ափ₁ (բուռ)—ափի, ափ₂ (եզր)—ափի և այլն: Կան մի քանի համանունական խմբեր, որոնց մի եզրն ունի հոլովական զուգաձևեր, ինչպես. դար₁ (բարձունք)—դարի, դար₂ (հարյուրամյակ)—դարի, նաև դարու, ժամ₁ (եկեղեցի)—ժամի, ժամ₂ (ժամանակ)—ժամի, նաև ժամվա:

Համանուն գոյականների հոլովման տիպերի քննությունը ցույց է տալիս, որ այդ բառերը հիմնականում հոլովվում են արտաքին թեքման ի հոլովմամբ: Այդ համանուն բառերը ձևական և իմաստային տեսակետից տարբերակված չեն:

Կան մի երկու համանունական խմբեր, որոնց անդամները տարբերվում են իրենց հոլովական ձևերով, ինչպես՝ սեր₁—զգացմունք, սեր₂—կաթի սեր: Առաջինը հոլովման ընդհանուր կանոններից շեղվում է և պատկանում է արտաքին թեքման ու հոլովման, իսկ երկրորդը՝ արտաքին թեքման ի հոլովման:

սեր ₁ —զգացմունք	սեր ₂ —կաթի սեր
ուղղ. սեր (ը)	սեր (ը)
տր. սիրո, սիրուն	սերի
բաց. սիրուց	սերից
գործ. սիրով	սերով
ներդ.—	(սերում)

Ուրեմն՝ սեր₁—զգացմունք և սեր₂—կաթի սեր, համանուն գոյականները արտասահմանային զուգադիպում են միայն ուղիղ կամ բառարանային ձևերում:

Տարբեր է նաև մայր₁—ծնող և մայր₂—մայրի ծառ համանունների հոլովումը. առաջինը հոլովվում է ներքին թեքման ու հոլովումով. մայր—մոր, իսկ երկրորդը՝ արտաքին թեքման ի հոլովումով. մայր—մայրի: Հետևապես այս գոյականները (երկու համանունական խումբ՝ 4 բառ) բառական համանունների շարքում հանդես եկող թերի համանուններ են:

Բայական համանունական խմբեր

Ժամանակակից հայերենի համանուն բառերի շարքում համանուն բայերն իրենց իմաստային և քերականական բազմազան դրսևորումներով կարևոր տեղ են գրավում: Թեև իրենց ընդգրկման ծավալով այդ բայերը գոյականական համանունների համեմատությամբ այնքան էլ շատ չեն, բայց, այնուամենայնիվ, կան բավական թվով բայեր, որոնք իրենց արտաքին հնչյունակազմով և արտասանությամբ լինելով նույնը, արտահայտում են տարբեր իմաստներ:

Համանուն բայերն արտահայտում են բազմազան գործողություններ և եղելություններ, այդ պատճառով դժվար է դրանք բաժանել խմբերի ընդհանուր խմբերի: Ի միջի այլոց, ոչ բոլոր համանուն բայերն ունեն իմաստային ընդհանրություններ: Դրանց համար ընդհանուրն այն է, որ նրանք իրենց բազմազան իմաստներով միավորվում են գործողության և վիճակի ընդհանրության տեսակետից:

Համանուն բայերի համար բնորոշ է այն, որ նրանք արտասանությամբ համընկնում են իրենց ուղիղ և թեքված (անդեմ և դիմավոր) բոլոր ձևերում: Հետևապես՝ բոլոր բայական համանունները լրիվ համանուններ են: Ի տարբերություն գոյականական համանունների, բայերի շարքում չկան մասնակի համանուններ: Համանուն բայեր են օրինակ՝ վառելի—հերկել, վառելք—քշել, առաջ շարժել, տանել, վայելել—վայել լինել, վայելելք—հաճույքով օգտագործել բարիքը, շրջել—շուռ տալ, շրջելք—շրջագայել և այլն, ձևին ժամանակ հովիտների և լեռնադաշտերի վրա հողագործ հայրը իր սովորական երգը երգելով, վառում էր կամ հնձում» (Բ): «Դավիթ եպիսկոպոսը չէր հաշտվում կրոնավորության և վանական կյանքի հետ, վառում էր աշխարհիկ կյանք» (Բ): «Նրան ինչ կվայելեր այդ տեսակ մարդկանց դուռը բաց անել» (Բ): «Իմ տեղ մի վարձկան աղախին լինեմ, ավելի հարգանք ու պատիվ կվայելեր» (ՆԴ): «Արամյանը ոչինչ չպատասխանեց, երեսը շրջեց դեպի մյուս կողմը» (Բ): «Նա յուր տանից դուրս գալուց հետո ոտքով մի քանի ժամվա մեջ շրջեց բոլոր գլխավոր տեղերը» (Բ):

Հանդիպում են մի քանի բայեր, որոնց ուղիղ ձևերը համահնչուն են բազմապատկական կամ հրավորական որոշ կազմու-

թյունների: Այսպես՝ կարոտեկ₁—անձկալ, կարոտեկ₂—կարել բայի բազմապատկականը, վարվել₁—վերաբերվել, վարվել₂—վարել բայի կրավորական ձևը, պատվել₁—հարգել, մեծարել, պատվել₂—պատել բայի կրավորականը:

Այս բայերը հանդես են բերում բառաքերականական համանուններին հատուկ հատկանիշներ:

Ածականական համանունական խմբեր

Համանուն բառերի շարքում որոշակի տեղ են գրավում նաև ածականներից կազմված համանունական խմբերը: Ըստ քանակի համանունական ածականները այնքան են, որքան բայերը (6,5%): Դրանք այն բառերն են, որոնք միևնույն արտասանությամբ և հնչյունակազմով արտահայտում են միանգամայն տարբեր երկու և ավելի հատկանիշների տարբերակված իմաստ:

Ածականներն իրենց արտահայտած իմաստներով բազմազան են: Այդ բազմազանությունը առանձնապես ակնառու է դառնում համանունական խմբերում հանդես բերած հակադրությունից: Պատահում է, որ երկու համանուն ածականներն էլ ցույց են տալիս որևէ հատկանիշի կամ իրի բացակայություն, այն շունենալու հատկանիշ, ինչպես՝ անխաշ₁—առանց խաշի, անխաշ₂—չխաշած, անլարման₁—չդարմանվող, անդեղ, անդարման₂—առանց հարդի, անսեր₁—առանց սիրո, անսեր₂—առանց սերի կամ երկուսն էլ ցույց են տալիս ունենալու հատկանիշ, ինչպես՝ ծլավոր₁—ծիլեր ունեցող, ծլավոր₂—ծոպեր ունեցող, բալերանգ₁—բալագույն, բալերանգ₂—մշուշագույն և այլն:

Ածականներից կազմված համանունական խմբերը հիմնականում երկանդամ են: Դրանցից են օրինակ՝ անկար₁—անկարող, անզոր, անկար₂—կար չունեցող, պապական₁—(կրոնական) Հռոմի պապին վերաբերող, պապական₂—պապից ժառանգված, հինավուրց, ծանրագին₁—շատ դժվարին, ծանր, ծանրագին₂—թանկարժեք և այլն, Ձնայած յուր վիրավոր ու անկար վիճակին, սկսավ իրան հատուկ աշխույժով պատմել» (Մ): «Դա հնարավորություն է տալիս անկար շարվածքով երեսապատում» (մամուլ): «Ուժեղացավ պապական իշխանությունը, եկեղեցու բռնապետությունը» (ԱԻ): «Գեղի քյասիբին պապական ժեսով փող էին տալիս 60 տոկոսով» (ԱԲ): «Ծանրագին տուրքով խեղդում է վանքերն ու եկեղեցիներ» (ԴԴ): «Բեկն օրհնության թուղթ

ու երկնագույն երանգներով հնդկական մի ծանրագին մարգարիտ էր ուղարկել նորահարսին» (ՍԽ)։

ԲԱՌԱՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՆՈՒՆ ԲԱՌԵՐ

Բառաքերականական համանուն բառերի շարքը կարելի է դասել իմաստով տարբեր այն բառերը, որոնք արտասանության մեջ համընկնում են ոչ նույնական քերականական ձևերում։ Այսինքն՝ բառաքերականական համանունները արտահայտության պլանում զուգահեռվում են, բովանդակության պլանում հակադրվում են և՛ բառական, և՛ քերականական իմաստներով։ Այս խմբին են պատկանում նաև այն բոլոր համանուն բառերը, որոնք առաջացել են տարբեր խոսքի մասերի փոխանցումից, ստացել են անկախ բառական իմաստ և պատկանում են տարբեր խոսքի մասերի։

Բառաքերականական համանունների որոշ առանձնահատկությունները բացահայտվում են նախադասության շարահյուսական կառուցվածքում։ Քանի որ համանունական այդ խմբի անդամները քերականորեն միանգամայն տարբեր բառեր են, ապա բնական է, որ լինում են նախադասության տարբեր անդամներ։ Օրինակ՝ առաջին—ամուսնու քույրը կնոջ հանդեպ, առաջին—մեկին մի բան հանձնել, բառերից առաջինը պատկանում է գոյականի, երկրորդը՝ բայի համակարգին, որի պատճառով էլ այդ բառերը արտասանության մեջ համընկնում են իրենց քերականական սոսկ մասնակի ձևերում և ըստ խոսքի մասի միանգամայն տարբեր բառեր են։ Եվ բնական է, որ այս համանուն բառերը նախադասության մեջ ավելի ջատ հանդես են գալիս տարբեր պաշտոններով։ Առաջինը նախադասության մեջ կարող է լինել ենթակա, խնդիր, որոշիչ, ստորոգյալ կազմող բառ, իսկ երկրորդը մեծ մասամբ՝ ստորոգյալ։ Առաջին—լացել, առաջին—թանկագին քարի տեսակ՝ կարկեհան, առաջին—համր, համանուն բառերը քերականական տարբեր արժեք ունեցող բառեր են, առաջինը պատկանում է բայի, երկրորդը՝ գոյականի, երրորդը՝ ածականի համակարգին։ Այս համանուն բառերը նախադասության կազմում հանդես են գալիս տարբեր պաշտոններով։ Իհարկե, հազվադեպ պատահում է նաև, որ տարբեր խոսքի մասերի պատկանող համանուն բառերը նախադասության մեջ հանգես են գալիս միևնույն պաշտոնով։

Բառաքերականական համանունական խմբի բաղադրիչները բովանդակության պլանում հակադրվում են՝ 1) իրենց ելակետա-

յին կամ ուղիղ ձեերում և 2) ելակետային և հարացուցային ձեերում:

Ժամանակակից հայերենում ավելի շատ տարածված է առաջին տիպը, քանի որ բառաքերականական համանունների մեծ մասը հակադրվում է ուղիղ կամ բառարանային ձեերում: Ելակետային և հարացուցային ձեերում հակադրվող համանունները համեմատաբար քիչ են. համանունական խմբի հարացուցային միավորը համադրական է, որի մեջ հարաբերվողը և հարաբերիչը հանդես են գալիս մեկ բառի սահմաններում: Բառաքերականական համանունական խմբերը հիմնականում երկանդամ են. հազվադեպ են պատահում երեք բաղադրիչներից կազմված խմբեր:

Բառաքերականական համանուններ են կազմվում բոլոր խոսքի մասերից, իհարկե, քանակային տարբեր հարաբերությամբ: Բառաքերականական համանունական խմբերում իր ակտիվ մասնակցությունն ունի գոյականը: Այն համանունական հակադրության մեջ է գտնվում ածականի, բայի, մակբայի, թվականի, կայի, ձայնարկության, եղանակավորող բառի հետ: Քանակային տեսակետից գոյականը ամենաշատ հակադրություններ կազմում է ածականի հետ: Ժամանակակից հայերենի Գ—Ա կազմությամբ համանունական խմբերը բառաքերականական համանունների մոտ 13 տոկոսն են: Այժմ դիտենք բառաքերականական համանունության կոնկրետ ենթատիպերը:

Գոյական-ածական

Կապիտալ—գույք, դրամ, կապիտալ—գլխավոր, արմատական, կանգուն₁—երկարության չափ, կանգուն₂—անկախ, անվնաս, կովան₁—հիմք, հենարան, կովան₂—կռվարար, սուր₁—թուր, սուր₂—հատու, շողակն₁—ադամանդ, շողակն₂—պայծառ, փայլուն աչքերով, խոնջ₁—թել, կապ, խոնջ₂—հոգնած, «Ահա իմ ունեցած ամբողջ կապիտալը» (ՆԴ): «1859 թ. լույս է տեսնում Դարվինի «Տեսականների ծագումը» կապիտալ աշխատությունը» (մամուլ): «Այստեղ անհիշատակ ժամանակներից կանգուն է նվիրական կադնին» (ԱԻ): «Զի բարձրանա, թե չլսես մեր ձայնին, Քո տաճարը ոչ մի կանգուն դեպի վեր» (ԳՄ): «Գոտիից քարշ էր ընկած երկսայրի սուրը» (Բ): «Սուր նիզակը խրեց դետնին» (ԱԻ): «Դեպի իրեն էր քաշում խոնջ ուղևորին» (Մ): Աղջիկները աղբյուրի մոտ թողեցին մազերի շոր ծաղիկներ, ոսկի խոնջը» (մամուլ):

Գոյական—բայ

Գրեթե հավասար չափով գոյականը համանունական հարաբերություն է կազմում բայի և մակբայի հետ: Համանունություն կազմող բաղադրիչներից մի քանիսը կազմվում են հարացուցային ձևերից:

Նլակետային ձևերից

Կիսել₁—մրգահյուսումը *հիված*
ուտելիք
կիսել₂—երկու մասի բաժանել
շինել₁—զինվորական վերարկու
շինել₂—պատրաստել, սարքել

Նլակետային և հարացուցային ձևերից

կար₁—կարվածք
կար₂—կամ պակասավոր բայի անկատար անցյալի եզակի թվի երրորդ դեմքը
կեր₁—ուտելիք
կեր₂—ուտել անկանոն բայի եզակի թվի հրամայականը
հարեմ₁—կանանոց
հարեմ₂—հարել բայի ըղձական ապառնիի եզակի թվի առաջին դեմքը
աներ₁—կնոջ հայրը՝ ամուսնու հանդեպ
աներ₂—անել բայի ըղձական անցյալի եզակի թվի երրորդ դեմքը

Գոյական—մակբայ

ավել₁—տնային գործածություն իր, ավել₂—ավելի
արդ₁—արդուզարդ, արդ₂—այժմ, հիմա
քեր₁—կանաչեղենի տերևներ, քեր₂—կողմ, հոգուտ

Գոյական—թվական

հազար₁—(բար) ուտվող բույս, հազար₂—հազար թիվը (1000)

Գոյական—կապ

համար₁—թիվ, թվահամար, համար₂—հոգուտ
հանդերձ₁—հագուստ, հանդերձ₂—միասին

Գոյական—դերանուն

այս₁—չար ողի, այս₂—սա

Գոյական—եղանակավորող բառ

բաս₁—(երաժշտ.) բամբ ձայն, բաս₂—հապա, իհարկե (խոսակց.):

Որոշ գոյականներ համանունական հարաբերություն են կազմում երկու տարբեր խոսքի մասերի հետ: Նման համանունական խմբերը տարածված չեն ժամանակակից հայերենի բառապաշարի համակարգում: Կան միայն հետևյալ տիպերը:

Գոյական—ածական—ձայնարկություն

աղու₁—թույն, աղու₂—հեզ, քնքուշ, աղու₃—նորածինների թոթովանքի ձայնը

Գոյական—ածական—բայ

լալ₁—թանկագին քար, կարեկահան, լալ₂—համր, լալ₃—լացել, գալ₁—ձմեռվա համար պահվող բանջարի հյուսը, գալ₂—գալիք, եկող, գալ₃—հասնել, ժամանել

Գոյական—ածական—մակբայ

պուտպուտ₁—վայրի խաշխաշ, պուտպուտ₂—սև ու սպիտակ պուտերով, պուտպուտ₃—կաթիլ-կաթիլ

Համանունական խմբեր են կազմվում նաև խոսքի մասային այլ զուգադրություններով:

Ածական-կապ

սիրուն₁—գեղեցիկ, սիրուն₂—ի սեր

Ածական-բայ

Ածականից և բայի
ուլիդ ձևերից

վայել₁—ողբալ

վայել₂—պատշաճ, արժանի

Ածականից և բայի հարացուցային ձևերից

անցան₁—չցանված, առանց ցանելու

անցան₂—անցնել բայի անցյալ կատարյալ ժամանակի հոգնակի երրորդ դեմքը

անցավ₁—ցավ չունեցող

անցավ₂—անցնել բայի անցյալ կատարյալ ժամանակի եզակի երրորդ դեմքը

Բայ-մակբայ

անաբգել₁—անպատվել, անաբգել₂—անխափան:

Ձայնարկություն—շաղկապ

ճապա₁—ուրեմն, իսկ, ճապա₂—դե (խրախուսանքի և հորդորանքի բացականչություն), «Հապա չես ասիլ՝ Դավիթը կրկին հոր վանքը ջինել, իշխան է դարձել» (ՀԹ): «Հապա լցրեք իմ քաջ հյուրեր բաժակները լի ու լի» (ՀԹ):

Կապ-մակբայ

հետ₁—միասին, հետ₂—ետ

Կապ-թվական

առաջին₁—առջև, առաջ, առաջին₂—մեկ քանակական թվականի դասականը, «Դուք պիտի զինվորների առաջին շարքումը լինեիք» (Մ): «Մահը անողոք և խստապահանջ կանգնեց սրամերկ նրա առաջին» (ԱԲ):

Դերանուն-մակբայ

ամեն₁—յուրաքանչյուր, ամեն₂—(եկեղ.) ճշմարիտ է, այդպես է, «Ամեն գարունքին արագիլն ուրախ կիջներ մեր ծառին» (ԱԻ): «Ամեն,—գոռացին տղերքը միաբերան» (ՊՊ):

Շաղկապ-եղանակավորող բառ

իսկ₁—բայց, դրան հակառակ, իսկ₂—անգամ, մինչև իսկ, «Անցել են դարեր, դարեր, իսկ իր կամքը դեռ խոսում է» (ԵԶ): «Եվ մենք ընդդեմ մեր իսկ կամքին, պատվեր տվինք մեր բանակին» (ՀԹ):

Այսպիսով, ժամանակակից հայերենում գոյություն ունեն բառաքերականական համանունական խմբերի հետևյալ տիպերը⁴⁸. Գ-Ա, Գ-Բ, Գ-Թ, Գ-Կ, Գ-Դ, Գ-ԵԲ, Գ-Ա-Ձ, Գ-Ա-Բ, Գ-Ա-Մ, Ա-Կ, Ա-Բ, Բ-Մ, Ձ-Շ, Կ-Մ, Կ-Թ, Դ-Մ, Շ-ԵԲ:

ԽԱՌՀ ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐ

Խառը համանունական խմբերը կազմված են երեք և ավելի բաղադրիչներից: Այս խմբերի բոլոր անդամները արտահայտության պլանում զուգադիպում են, բովանդակության պլանում

⁴⁸ Համառոտագրության համար նշում ենք միայն խոսքի մասերի անվանումների առաջին տառերը:

Հանդես են բերում խառը հակադրությունների Համանունական խմբի անդամներից երկուսը կամ երեքը իրենց քերականական նույնական ձևերում հանդես են բերում բառական հակադրություններ, իսկ խմբի մնացած անդամների նկատմամբ՝ բառաքերականական հակադրություններ⁴⁹։

Բառական և բառաքերականական խմբերը շատ չեն, դրանք կազմում են ամբողջ համանունական խմբերի 18,9 տոկոսը։ Այդ խմբերի կազմությանը մասնակցում են ոչ բոլոր խոսքի մասերին պատկանող բառերը։ Այստեղ ավելի ակտիվություն են ցուցաբերում գոյականները և ածականները։ Խոսքի մասերից բայը, շաղկապը և ձայնարկությունը ևս մասնակցում են այդ խմբերի կազմությանը, մնացած խոսքի մասերը համանունական խմբերում շատ քիչ են հանդես գալիս։

Բառական և բառաքերականական համանունության խմբի տիպերը առանձնապես բազմազան չեն։

Գոյական—գոյական—բայ

կաւ₁—կալը կալսելու երկրագործական գործիք, կաւ₂—հոժարություն, կաւ₃—կաւ պակասավոր բայի անկատար ներկայի եզակի թվի առաջին դեմքը

Գոյական—գոյական—ածական

կապ₁—թոկ, շղթա, կապ₂—(քեր.) խոսքի մաս, կապ₃—կապված, խաշար₁—(պատմական) աշխատող ուժ, խաշար₂—ցանկապատի ձող, խաշար₃—նոսր հյուսված, ժեռ₁—ժայռ, ժեռ₂—թռչուն, ժեռ₃—մութ, խոր

Ածական—ածական—գոյական

խաժ₁—կապտավուն, խաժ₂—թավ, ստվար, խաժ₃—փառ, ծոռ—ծոռ₁—ծորալուվ թափվող, ծոռ—ծոռ₂—շաղ եկած, ծոռծոռ₃—ձորակ։

⁴⁹ Պատահում են նաև քառանդամ համանունական խմբեր, որոնց երկու անդամները իրար նկատմամբ կազմում են մեկ բառական հակադրություն, մյուս երկուսը՝ մի այլ բառական հակադրություն, իսկ երկու տարրեր բառական հակադրություն կազմող բառերի անդամները միմյանց նկատմամբ դրսևում են բառաքերականական հակադրությունների մեջ։ Քանի որ համանունական խմբի այս տիպը այնքան տարածված չէ ժամանակակից հայերենում և սովորաբար այդ բառերից մեկը կամ երկուսը լինում են հնացած կամ բարբառային բառեր, ուստի դրանք չեն քննվում։

Ուրեմն ժամանակակից հայերենում տարածված են բառական և բառաքերականական համանունների հետևյալ տիպերը. Գ-Գ-Բ, Գ-Գ-Ա, Ա-Ա-Գ:

Ամփոփելով արդյունքները, համանունական բոլոր խմբերի տիպերը կարելի է արտահայտել աղյուսակով:

Համանունական խմբերի տիպերը	Համանունական խմբերի ենթատիպերը ըստ նրա անդամների խոչի մասային պատկանելության	Ենթատիպերի քանակը
Բառական համանունական խմբեր	Գ-Գ, Ա-Ա, Բ-Բ, Մ-Մ	4
Բառաքերականական համանունական խմբեր	Գ-Ա, Գ-Բ, Գ-Մ, Գ-Բ, Գ-Կ, Գ-Գ, Գ-ԵԲ, Գ-Ա-Ձ, Գ-Ա-Բ, Գ-Ա-Մ, Ա-Կ, Ա-Բ, Բ-Մ, Ձ-Շ, Կ-Մ, Կ-Բ, Գ-Մ, Շ-ԵԲ:	18
Խառը խմբեր	Գ-Գ-Բ, Գ-Գ-Ա, Ա-Ա-Գ	3
Ընդամենը		25

Այսպիսով, մեր քննությունը ցույց է տալիս, որ ժամանակակից հայերենի համանուն բառերը հանդես են բերում տարբեր առանձնահատկությունների: Դրանք ամփոփենք հետևյալ կետերով.

1. Խառակաճ համանունների համար բնորոշ է այն, որ նրանք՝

- ա) արտասանությամբ նույնն են,
- բ) քերականորեն նույնական են,
- գ) քանի որ պատկանում են տարբեր խոսքի մասերի, հետեւյալս են տարբեր շարահյուսական գործառնություն,
- դ) մեծ մասամբ տարարմատ են,
- ե) քանակով ամենից շատն են (77,92 տոկոս),
- զ) իրենց ենթատիպերով շատ բազմազան են:

2. Բառաքերականական համանունների համար բնորոշ է այն, որ նրանք՝

- ա) արտասանությամբ նույնն են,
- բ) քերականական տարբեր արժեք ունեցող միավորներ են,

- գ) քանի որ պատկանում են միևնույն խոսքի մասերին, հետև-
վապես ունեն նաև նման շարահյուսական գործառություն,
դ) մեծ մասամբ տարարմատ են,
ե) քանակով համեմատաբար քիչ են (18,9 տոկոս),
զ) իրենց ենթատիպերով շատ բազմազան են:

3. Խառը համանունների համար բնորոշ է այն, որ նրանք՝

- ա) արտասանությամբ նույնն են,
բ) ունեն քերականական միևնույն և տարբեր կարգերի պատ-
կանող անդամներ,
գ) ունեն շարահյուսական նման և տարբեր գործառություն,
դ) հիմնականում տարարմատ են,
ե) քանակով շատ քիչ են (3,89 տոկոս),
զ) իրենց ենթատիպերով բազմազան չեն:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԱ — Ա. Արփիարյան	ՀԿԲ — Հ. Հակոբյան
ԱԱ ₂ — Աշուղ Աշոտ	ՀՀ — Հ. Հովհաննիսյան
ԱԲ — Ա. Բակունց	ՀՊ — Հ. Պարոնյան
ԱԻ — Ա. Իսահակյան	ՀՇ — Հ. Շիրազ
ՀԱ — Հ. Աճառյան	ՀՔ — Հ. Քոչար
ԱՍ — Ա. Սահինյան	ՀՍ — Հ. Սահյան
ԲՎ — Բ. Վերդյան	ՂԱ — Ղ. Աղայան
ԳՋ — Գ. Զոհրապ	Մ — Մուրացյան
ԳԷ — Գ. Էմին	ՄՄ — Մ. Մեծարենց
ԳՄ — Գ. Մահարի	ՇՀ — Շախմատային Հայաստան
ԳՈ — Գ. Սարյան	ՄՊ — Մ. Պեշկեպաշյան
ԳՍՀՀՇ — Գ. Սևակ, Հայոց լեզվի շարա- հյուսություն	ՄԽ — Մ. Խերանյան
ԴԴ — Դ. Դեմիրճյան	ՆԲՀՀ — Նոր բողոքի հայկազեան լեզուի
ԴՎ — Դ. Վարուժան	ՆԴ — Նար-Դոս
ԵԶ — Ե. Զարենց	ՆՋ — Ն. Զարյան
ՋԵ — Ջ. Ծալան	Շ — Շերամ
ԺՀԼԲԻ — Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (հ. 1, 1969)	ՇԲ — Շիրվանզադե
Լ — Լեյլի	ՊԴ — Պ. Դուրյան
ԼՄ — Լ. Մանվելյան	ՊՊ — Պ. Պոռչյան
ԽԴ — Խ. Դաշտենց	ՊՍ — Պ. Սևակ
ՀԹ — Հ. Թումանյան	Ջ — Ջիվանի
	ՍԱԺՀՔ — Ս. Աբրահամյան, Ժամանա- կակից հայերենի քերականություն

ՍԶ — Ս. Զորյան

ՍԽ — Ս. Խանդավյան

ՍՇ — Ս. Շահազիզ

ՎՇԼԱ — Վ. Շեքսպիր (սիրարթած)

ՎՍ — Վ. Սարոյան

ՎՎ — Վ. Վազարյան

ՎՏ — Վ. Տերյան

ՎՐԲ.Փ — Վրբ. Փափազյան

ՎՓ — Վ. Փափազյան

Տ — Տարոնցի

ՏՆԶԺԶ — Տ. Նավասարդյան, Հայ ժողո-

վրդական հեթաթներ

Բ — Բաֆֆի